

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

Журнал издается с 5.01.1948 г.
Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագիր), Հ.Ա. ԹԵՐԶՅԱՆ (գլխ. խմբ. տեղակալ),
Զ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս.Գ. ԱԴԲԱԼՅԱՆ, Ռ.Վ. ԱՌՈՅԱՆ,
Վ.Վ. ԲՈՒՆԻԱՏՅԱՆ, Ա.Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ժ.Դ. ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ,
Ս.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Ռ.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Վ.Ս. ՍԱՖԱՐՅԱՆ, Ս.Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Ա.Թ. ՔՈՒՉՈՒԿՅԱՆ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН (главный редактор), А.А. ТЕРЗЯН (зам. глав. редактора),
З.К. СТЕПАНЯН (ответственный секретарь), С.Г. АГБАЛЯН, Р.В. АТОЯН,
В.В. БУНИАТЯН, А.Х. ГРИГОРЯН, Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН,
А.Т. КУЧУКЯН, В.З. МАРУХЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН,
В.С. САФАРЯН, С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН

EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN (editor-in-chief), H.A. TERZYAN (vice-editor-in-chief),
Z.K. STEPANYAN (executive secretary), S.G. AGHBALYAN,
R.V. ATOYAN, V.V. BUNIATYAN, Zh.D. DAVIDYAN,
S.P. DAVTYAN, S.M. GHAZARYAN, A.Kh. GRIGORYAN, A.T. KUCHUKYAN,
V.Z. MARUKHYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN, V.A. SAFARYAN,
S.H. SIMONYAN, M.G. STAKYAN

Հրատ. խմբագիր՝

Ժ.Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ

Խմբագիրներ՝

Հ.Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.Կ. ՊՈՂՈՍՅԱՆ, Ա.Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Կ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱԿԱՇՓԱԿԱՆ ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՇՓԱՔԻՄԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հակաշփական պոլիմերային նյութերի շփման ընթացքում մակերևութային շերտերում ընթացող շփաքիմիական պրոցեսների վերլուծությամբ հաստատված է, որ դրանց ջերմա- և շփակազմալուծումն ընթանում է հիմնականում միամոլեկուլային մասնիկների առաջացմամբ, որոնք պոլիմերների շղթայում ապապոլիմերացման կամ ցածրամոլեկուլային բեկորների արդյունք են, ինչն ուժգնանում է սահքի արագության աճի հետ մեկտեղ:


Առանցքային բառեր. պոլիմեր, շփաքիմիական պրոցես, ջերմա- և շփակազմալուծում, մաշակայունություն:

Պոլիմերային նյութերի շփագիտության բնագավառում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի ֆունկցիոնալ փոխադարձ կապ պոլիմերների կարևորագույն շահագործման բնութագրերի և մակերևութների շփահպման տեղամասում ընթացող շփաքիմիական պրոցեսների միջև: Այդ պրոցեսների օրինաչափությունների բացահայտումն ու դրանց հիման վրա պոլիմերների կառուցվածքի և հատկությունների կառավարման մեթոդների զարգացումը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում ժամանակակից մաշակայուն հակաշփական կոմպոզիտային պոլիմերային նյութերի նպատակային մշակման տեսանկյունից [1-4]:


Որպես հետազոտման առարկա ընտրվել են հետևյալ ջերմապլաստիկ հակաշփական պոլիմերային նյութերը (աղ.1), որոնք արտադրվում են մեծ քանակներով և ունեն լայն կիրառություն մեքենաշինության ու սարքաշինության մեջ որպես սահքի առանցքակալներ, փոքրամոդուլ ատամնանիվներ, ուղղորդիչներ և այլն:

Պոլիմերային նյութերի մակերևութային շերտերում ընթացող շփաքիմիական պրոցեսների ուսումնասիրությունն իրականացվել է կառուցվածքային շփամեխանիկայի մեթոդներով: ՖԴՀ մակերևութային շերտերի վիճակային վերլուծությունը ցույց է տալիս (նկ. 1), որ ինֆրակարմիր սպեկտրում, մինչև շփումը, առկա է զգալի կլանման շերտ 1050 սմ^{-1} տիրույթում, ինչը համապատասխանում է պոլիֆորմալդեհիդի C–O–C վալենտային տատանմանը:

Հետազոտվող հակաշփական պոլիմերների կառուցվածքային բանաձևերը

Պոլիմեր	Շղթայի կառուցվածքը
Ֆորմալդեհիդի և դիօքսոլանի համապոլիմեր (ՖԴՀ)	$\text{CH}_2 - (\text{O} - \text{CH}_2)_n - \text{O} (\text{CH}_2 - \text{CH}_2)_m - \text{O} - \text{CH}_2\text{OH}$
Պոլիամիդ 6 (ՊԱ-6)	$[- \text{NH} - (\text{CH}_2)_5 - \text{CO} -]_n$
Պոլիամիդ 66 (ՊԱ-66)	$[\text{NH} - (\text{CH}_2)_6 - \text{NH} - \text{CO} - (\text{CH}_2)_4 - \text{CO}]_n$
Պոլիֆենիլօքսիդ (ՊՖՕ)	


Շփումից հետո, նույնիսկ համեմատական փոքր արագությունների ($V \leq 1$ մ/վ) պայմաններում, նկատվում է այդ շերտի ուժգնության նվազում և նոր կլանման շերտի առաջացում 1720 սմ^{-1} տիրույթում, ինչը համապատասխանում է կարբոնալ խմբերի վալենտային տատանմանը և վկայում է շփաօքսիդացման պրոցեսների առկայությունը, որոնք ավելի են ակտիվանում շփման արագության աճի հետ մեկտեղ ($V \geq 1,5$ մ/վ): Ուստի և շփման բարձր արագությունների պայմաններում ընթանում են շփաօքսիդացման պրոցեսներ, որոնք նպաստում են պոլիմերի մակրոմոլեկուլի տրոհմանն ու կարբոնալ միացությունների առաջացմանը, ինչը հանգեցնում է պոլիմերի մաշման զգալի աճին:



Նկ. 1. ՖԴՀ ինֆրակարմիր սպեկտրները մինչև շփումը (1) և շփումից հետո (2, 3) սահմի 1,0 և 1,5 մ/վ արագությունների պայմաններում

ՖԴՀ մակերևութային շերտերի ջերմաձանրաչափային և դիֆերենցիալ ջերմալին ուսումնասիրությունը (նկ. 2) բացահայտում է նախնական փորձանմուշի (կոր 3) էնդոթերմային երկու գագաթների առկայությունը համապատասխանաբար 170 $^{\circ}\text{C}$ և

295 °C ջերմաստիճանների համար: Համեմատաբար կոշտ շփման պայմաններում ($V = 1,5$ մ/վ) դիտվում է ջերմաձանրաչափական երևույթների և զանգվածի կորստի տեղաշարժ դեպի ցածրաջերմաստիճանային տիրույթ (4 և 3 կորեր): Սա կարող է վկայել ցածրամոլեկուլային մասնիկների առկայության, իսկ էկզոթերմիկ գագաթի առաջացումը 280 °C դեպքում՝ պոլիմերի քիմիական զգալի փոփոխության մասին:



Նկ. 2. ՖԴՀ մակերևութային շերտերի ջերմաձանրաչափային (1, 2) և դիֆերենցիալ ջերմային (3, 4) կորերը մինչև շփումը (1, 3) և շփումից հետո (2, 4) ($V = 1,5$ մ/վ և $P_a = 0,2$ ՄՊա)

Պոլիմերների մակերևութային շերտերում ընթացող շփաքիմիական պրոցեսների հետագա ուսումնասիրությունը կատարվել է մինչև շփումը և 6 ժամ շփումից հետո, իսկ ջերմա- և շփակազմալուծման մասնիկներն ու միացության կառուցվածքը բերված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2


ՖԴՀ ջերմա- և շփակազմալուծման մասնիկներն ու միացության կառուցվածքը	
Մասնիկ (m/z)	Միացության կառուցվածքը
29	- CH - O
30	- CH ₂ - O
31	- CH ₂ - OH
44	- CH ₃ - O - CH
45	- CH ₃ - OH - CH
100	CH = CH ₂ - O - CH ₂ - OCH = CH ₂
104	OH - (CH ₂ - O) ₂ - CH = CH ₂
177	-CH ₂ - O - (CH ₂ - O) ₄ - CH = CH ₂

ՖԴՀ ջերմա- և շփակազմալուծման պրոցեսն ընթանում է հիմնականում միամոլեկուլային մասնիկների (m/z 29, 30, 31, 44, 45) առաջացմամբ, որոնք համապոլիմերի շղթայում օքսիմեթիլային (m/z 29, 30, 31) և օքսիէթիլային (m/z 44, 45) բեկորների

ապապոլիմերացման, ինչպես նաև ցածրամոլեկուլային (m/z 100, 104, 177) բեկորների առաջացման արդյունք են: Նշված մասնիկների առավելագույն անջատումը դիտվում է 200...250 °C:


Մակերևութային շերտի վիճակային վերլուծությունը 6 ժամ շփումից հետո վկայում է, որ մասնիկների ուժգին անջատման պրոցեսը տեղաշարժվում է դեպի ցածրաջերմաստիճանային տիրույթ, ինչպես նաև նկատվում է m/z 29 և m/z 30 մասնիկների քանակի ավելացում՝ նախնական փորձանմուշի հետ համամատասած: Դա նշանակում է, որ շփման ժամանակ առաջանում է ցածրամոլեկուլային մասնիկներ պարունակող «երկրորդային» կառուցվածք, իսկ m/z 31 մասնիկների առաջացման ուժգնության զգալի նվազումը կարող է պայմանավորված լինել ցածրամոլեկուլային մասնիկների քայքայման առանձնահատկություններով, մասնավորապես՝ դիտվում է -CH₂-OH մասնիկների քանակական նվազում: Միևնույն ժամանակ, օքսիդիլային բեկորների (m/z 44, 45) առաջացման ուժգնությունը պահպանվում է նախնական նմուշի մակարդակին, ինչը կարող է բացահայտվել քայքայման նկատմամբ դրանց ավելի բարձր կայունությամբ: Նշված մասնիկների առաջացման բնութագրերը պատկերված են նկ. 3-ում:

Կատարված հետազոտությունները բացահայտում են շփաքիմիական պրոցեսների բնույթը՝ պայմանավորված հիմնականում պոլիմերների ապապոլիմերացման երևույթով, ինչն ուժգնանում է սափքի արագության աճի հետ մեկտեղ: Ընտրված շփման պայմաններում համապոլիմերի շփակազմալուծման m/z 29 և 30 մասնիկները վկայում են օքսիմեթիլային կապերի ապապոլիմերացման մասին: Շփման ցածր արագությունների դեպքում ($V = 0,2$ մ/վ) նկատվում է օքսոլանային մասնիկների անջատման ուժգնության համեմատական աճ (նկ. 4):



Նկ. 3. ՖՂՇ ջերմակազմալուծման մասնիկների m/z 29, 30, 31 (ա) և m/z 44, 45 (բ) առաջացման կինետիկան մինչև շփումը և շփումից հետո

Կարելի է ենթադրել, որ շփման համեմատաբար փափուկ պայմաններում շփաքիմիական պրոցեսներն ընթանում են հիմնականում համապոլիմերի ամորֆ կառուցվածքում: Ավելի կոշտ շփման պայմաններում, երբ նվազում են պոլիմերային մակերևութային շերտի ջերմաֆիզիկական և ֆիզիկամեխանիկական հատկությունները, m/z 29 և 30 մասնիկների անջատման ուժգնությունն աճում է, ինչը նպաստում է m/z 44 և m/z 29, 30 հարաբերակցության մեծացմանը մինչև 1:6: Վերը նկարագրված շփակազմալուծման մեխանիզմը, կոշտ շփման պայմաններում, նպաստում է ցածրամոլեկուլային մասնիկներ պարունակող մակերևութային շերտերի «երկրորդային» կառուցվածքի առաջացմանը [5]:



Նկ. 4. Համապոլիմերի շփակազմալուծման հիմնական մասնիկների անջատման կինետիկան 0.6 (1) և 0.2 մ/վ (2) արագությունների դեպքում

Այսպիսով, պոլիմերային նյութերի շփման ժամանակ մակերևութային շերտերում ընթացող շփաքիմիական պրոցեսների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆորմալդեհիդի և դիօքսուլանի համապոլիմերի ջերմա- և շփակազմալուծումն ընթանում է հիմնականում միամոլեկուլային մասնիկների (m/z 29, 30, 31, 44, 45) առաջացմամբ, որոնք համապոլիմերի շղթայում օքսիմեթիլային և օքսիէթիլային բեկորների ապապոլիմերացման կամ ցածրամոլեկուլային բեկորների (m/z 100, 104, 177) առաջացման արդյունք են: Պոլիամիդների մաշման ուժգնությունը կախված է ամիդային կապի α -մեթիլային խմբով ընթացող շփակազմալուծման արագությունից, իսկ $\text{NH}-\text{CH}_2$ - կապի կազմալուծման հավանականության իջեցումը նպաստում է նյութերի մաշակայունությանը: Պոլիֆենիլօքսիդի ջերմա- և շփակազմալուծումն ընթանում է հիմնականում երկփուլային ջերմաստիճանային (200 և 450 °C) տիրույթներում. 200 °C դեպքում պրոցեսն ուղեկցվում է քսիլոլի (m/z 106) և տոլուոլի (m/z 91) անջատումով, իսկ 450 °C դեպքում՝ m/z 107 և m/z 122 մասնիկների առաջացմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Трение и износ материалов на основе полимеров / В.А. Белый, А.И. Свириденко и др. - Минск: Наука и техника, 1976.- 431 с.
2. Полимеры в узлах трения машин и механизмов: Справочник / Под ред. А.В. Чичинадзе.- М: Машиностроение, 1980.- 208 с.
3. **Погосян А.К.** Трение и износ наполненных полимерных материалов. – М.: Наука, 1977. - 138 с.
4. **Ениколопян Н.С., Вольфсон С.А.** Химия и технология полиформальдегида.- М.: Химия, 1968.- 279 с.
5. **Погосян А.К., Карапетян А.Н., Оганесян К.В.** Трибохимические процессы и их влияние на фрикционные свойства антифрикционных полимеров // Тр. Межд. конф. ПОЛИКОМТРИБ-2013. - Гомель, 2013. - С.184.

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ): Նյութեր ներկայացվել է խմբագրություն 30.01.2014:

А.К. ПОГОСЯН, А.Н. КАРАПЕТЯН, К.В. ОГАНЕСЯН **ИССЛЕДОВАНИЕ ТРИБОХИМИЧЕСКИХ ПРОЦЕССОВ** **АНТИФРИКЦИОННЫХ ПОЛИМЕРНЫХ МАТЕРИАЛОВ**

Анализом протекающих в поверхностных слоях трибохимических процессов при трении антифрикционных полимерных материалов установлено, что их термо- и трибораспад происходит в основном при возникновении мономолекулярных продуктов, являющихся результатом деполимеризации или низкомолекулярных фрагментов в цепи полимера, что усиливается одновременно с повышением скорости скольжения.

Ключевые слова: полимер, трибохимический процесс, термо- и трибораспад, износостойкость.

A.K. POGOSIAN, A.N. KARAPETYAN, K.V. HOVHANNISYAN **INVESTIGATING THE TRIBOCHEMICAL PROCESSES OF** **ANTIFRICTION POLYMER MATERIALS**

By the study of tribochemical processes in superficial layers at the friction of antifriction polymer materials, it is determined that their thermal and tribodestruction mostly takes place in case of formation of monomolecular particles which are, the result of depolymerization or low molecular fragments in the polymer chain which intensifies simultaneously with the increase in the sliding velocity.

Keywords: polymer, tribochemical process, thermal and tribodestruction, wear resistance.

Հ.Վ. ԾՈՒՂՈՒՆՅԱՆ, Լ.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՑԻՆ
ԻՆՏԵԳՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Վերլուծված են Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի զարգացման հարցերը, բացահայտվել են ՀՀ էներգետիկ ոլորտի երկարաժամկետ զարգացման հիմնական նախադրյալները տարածաշրջանային ինտեգրացման համատեքստում, և առաջարկվել են դիտարկվող խնդիրների լուծման ուղղություններ:

Առանցքային բառեր. էլեկտրաէներգետիկա, էներգետիկական անվտանգություն, էներգետիկական ռեսուրսներ:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի արտադրությունը հիմնականում ապահովվում է ՋԷԿ-երի, ԱԷԿ-ի և ՀԷԿ-երի շնորհիվ: Ընդ որում՝ հայկական ԱԷԿ-ի մասնաբաժինն էներգիայի արտադրության մեջ կազմում է 40...43%, Հրազդանի և Երևանի ՋԷԿ-երի գումարային մասնաբաժինը՝ 25...30%, ՀԷԿ-երին (Միջազգային էներգետիկական կորպորացիա (ՄԷԿ), Որոտան, ՁորաՀԷԿ) բաժին է ընկնում էներգիայի ընդհանուր արտադրության 27%-ը: Վերջին տարիներին շահագործման են հանձնվել Երևանի նոր և Հրազդանի 5-րդ էներգաբլոկների շոգեգազային տեղակայանքները: 2008թ. շահագործման է հանձնվել Լուսակերտի կենսագազային էլեկտրակայանը, գործում են նաև փոքր ՀԷԿ-եր և «Լոռի-1» հողմակայանը (աղ.):

Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի հետագա զարգացումը կախված է նաև տարածաշրջանային ինտեգրացման և էլեկտրաէներգիայի արտահանման/ներկրման հնարավորություններից: Խնդրի նման դրվածքի պարագայում փորձենք վերլուծել և գնահատել մեր տարածաշրջանի երկրների էլեկտրաէներգետիկական համակարգերի և ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ներկա իրավիճակը:

Հարավային Կովկասի երկրներին, Իրանին և Թուրքիային վերաբերող նյութերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ այդ երկրներն ընտրել են էլեկտրաէներգետիկական համակարգերի զարգացման ինքնաբավարարման սկզբունքը, որը անխուսափելիորեն կհանգեցնի ներկայիս էներգահաշվեկշռի մեզ համար անցանկալի փոփոխությանը [1]: Բացի դրանից, Կասպից ծովի ավազանի էներգետիկ ռեսուրսները կարտահանվեն Հայաստանի տարածքը շրջանցող արևելք-արևմուտք վառելիքատրանսպորտային մայրուղիներով՝ հանգեցնելով Հայաստանի դերակատարության նվազմանը՝ էլեկտրաէներգիայի արտահանման տեսանկյունից:

Ապագայում տարածաշրջանում ի հայտ կգա բավականին կոշտ մրցակցություն՝ էներգետիկ շուկայում գործունեություն ծավալելու համար, և ակնհայտ է, որ քաղաքական ու տնտեսական առավելություն կստանա այն երկիրը, որը բարձր տեմպերով կկարողանա իրականացնել իր զարգացման ծրագրերը՝ հատկապես արտահանման կողմնորոշում ունեցող և բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերում: Այլ կերպ ասած, այդ երկրների վարած քաղաքականության հիմքում պետք է դրված լինի արտասահմանյան ներդրումների համար գրավիչ քաղաքական-տնտեսական միջավայրի ստեղծումը: Վերջինս առանձնահատուկ նշանակություն է ստանում այնպիսի կապիտալատար ոլորտի զարգացման դեպքում, ինչպիսին էլեկտրաէներգետիկան է [2]: Գոյություն ունի տարածաշրջանային ինտեգրացմանը վերաբերող մեկ նկատառում ևս, համաձայն որի ապագայում տարածաշրջանային էներգետիկ շուկաների սպասարկման համար ծավալվելիք մրցակցության մեջ առաջնային տեղ կարող է զբաղեցնել այն երկիրը, որը կունենա ատոմային էլեկտրակայանում ոչ թանկարժեք բազիսային էլեկտրաէներգիա արտադրելու հնարավորություն, դրանով իսկ նվազեցնելով ՋԷԿ-երից օրգանական վառելիքի այրման արդյունքում արտանետվող վնասակար միացություններով շրջակա միջավայրի աղտոտումը և այդ արտանետումների համար բնապահպանական պարտադիր վճարների մեծությունը: Ակնհայտ է, որ տարածաշրջանում քաղաքական ու տնտեսական առավելություններ ստանալու նպատակով Հայաստանն առավել բարձր տեմպերով պետք է իրականացնի իր էներգետիկ զարգացման ծրագրերը: Հարևան Վրաստանը, որն այսօր ստեղծել է լայն հնարավորություններ թե՛ էլեկտրաէներգիայի արտահանման և թե՛ տարանցիկ արտահանման ծառայություններ մատուցելու գործում, հարուստ է սեզոնային հիդրոէներգետիկական ռեսուրսներով, բացառությամբ երկու խոշոր ՀԷԿ-երի, որոնց համար նախատեսվում է զգալի տարողությամբ ջրամբարների կառուցում: Սակայն, անգամ այս պարագայում, այդ ՀԷԿ-երի տարեկան աշխատաժամերի թիվը կկազմի 4000...5000 ժամ և հետևաբար՝ դրանք առավելագույնը կարող են հանդիսանալ կիսաբազիսային կայաններ: Այս վերջին դրույթները ևս մեկ անգամ ապացուցում են էլեկտրաէներգիայի արտադրության բազիսային հզորությունների ստեղծման անհրաժեշտությունը ՀՀ-ում՝ միննույն ժամանակ ապահովելով Հայաստանի էներգահամակարգի ներգրավումը ինչպես Կասպյան, այնպես էլ Սևծովյան երկրների միացյալ էներգահամակարգերում: Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող հզորությունները հիմնականում կառուցվել են՝ սկսած նախորդ դարի 60-ական թվականներից (բացառությամբ որոշ ՀԷԿ-երի): Ադ. 1-ում բերված են էլեկտրակայանների նախագծային և մնացորդային ռեսուրսների վերաբերյալ տվյալներ, որոնցից կարելի է եզրակացնել, որ այսօրվա դրությամբ մնացորդային ռեսուրսը կազմում է 1910 ՄՎտ՝ 3949 ՄՎտ նախագծային հզորության փոխարեն: Ընդ որում, Հայկական ԱԷԿ-ի մնացորդային ռեսուրսը, որը կազմում է 392 ՄՎտ, սպառվում է 2016թ.-ին: Փաստորեն, եթե անմիջապես չսկսվի

նոր արտադրող հզորությունների կառուցումը ՀՀ-ում, ապա 2016թ.-ին կունենաք միայն 1518 ՄՎտ տեղակայված հզորություն:

Հայաստանում էներգետիկայի զարգացումը հիմնված է մի շարք ռազմավարական ծրագրերի վրա, այդ թվում՝ էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարության (2007թ.), որը ձևակերպում է կայուն զարգացման և ազգային անվտանգության հայեցակարգերը՝ հաշվի առնելով հեռահար ռազմավարական նպատակները և ընդհանուր ուղղությունները:

Աղյուսակ


Էլեկտրակայանների նախագծային և մնացորդային ռեսուրսներ

Էլեկտրակայանների անվանումը		Գործարկման տարեթիվ	Նախագծային ռեսուրս	Մնացորդային ռեսուրս	Նախագծային տնօրինելի ռեսուրս	Մնացորդային հզորություն
ՀԱԷԿ		1980/1995	30	3	392	392
Հրազդանի ՋԷԿ հին ագրեգատներ		1966-1974	30	0	1110	0
Հրազդանի ՋԷԿ 5-րդ նոր բլոկ		2011	30	28	448	448
Երևանի ՋԷԿ հին ագրեգատներ		1963-1966	30	0	550	0
Երևանի ՋԷԿ նոր էներգաբլոկ		2009	30	27	220	220
Որոտան ՋԷԿ-երի կապիտալ	Տաթևի ՋԷԿ	1970	55	12	404	404
	Շամբի ՋԷԿ	1978	55	10		
	Սպանդարյանի ՋԷԿ	1989	55	21		
Մեծ Հրազդանի ՋԷԿ-երի կապիտալ	Քանաքեռի ՋԷԿ	1936	55	0	554	0
	Սևանի ՋԷԿ	1951	55	40		50
	Արգելի ՋԷԿ	1953	55	0		0
	Արզնի ՋԷԿ	1956	55	0		0
	Հրազդանի ՋԷԿ	1959	55	1		81
	Երևանի ՋԷԿ	1962	55	4		44
Փոքր ՋԷԿ-երի և այլ վերականգնվող ռեսուրսներ		2006	30	25	271	271
Ընդամենը					3949	1910

Այժմ դիտարկենք Էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսումները ՀՀ-ի ներքին շուկայում՝ հաշվի առնելով նաև տարածաշրջանային կապերը: Նկ. 1-ում բերված են մինչև 2030թ. Էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսումները ՀՆԱ-ի 5...7% աճի պայմաններում: Ըստ միջազգային փորձի՝ նման ՀՆԱ-ի և ոչ լավատեսա-

կան մոտեցման դեպքում էլեկտրաէներգիայի սպառման տեմպն ըստ տարիների չի գերազանցում 2,8 տոկոսը [3]:

Նկ.1-ից երևում է, որ 2030թ.-ին, 10% համակարգային պաշարի առկայության պայմաններում, էլեկտրաէներգիայի արտադրությունը կկազմի 18,0 մլրդ.կՎտժ, և կլինի 1,8 մլրդ.կՎտժ համակարգային պաշար արտադրելու հնարավորություն:



Նկ. 1. ՀՀ-ում էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսումները մինչև 2030թ.

Միայն ներքին շուկայի սպառման համար անհրաժեշտ է լինելու շուրջ 11,0 մլրդ.կՎտժ էլեկտրաէներգիա: Ի դեպ, 10% պաշարային հզորությունը ԵՄ երկրների համար ընդունված չափորոշչային մեծություն է, ինչը պայմանավորված է ԵՄ երկրների միջալեռական էլեկտրահաղորդման հզոր գծերի առկայությամբ: Մեր երկրի դեպքում, եթե չհաջողվի ստեղծել ՌԴ-Վրաստան-ՀՀ-ԻԻՀ, այսպես կոչված, «Հյուսիս-Հարավ» 400/500 կՎ լարման բարձր թողունակությամբ (նախատեսվում է մինչև 1000 ՄՎտ հզորության տարանցում) էլեկտրահաղորդման գիծը, ապա էլեկտրամատակարարման հուսալիությունն ապահովելու համար անհրաժեշտ կլինի նախատեսել մոտ 20% համակարգային պաշար (նկ. 2):

Կարևոր նախադրյալ է հարևան երկրների հետ փոխհարաբերությունների զարգացումը: Էներգետիկայի ոլորտում ՀՀ հիմնական գործընկերները ԻԻՀ և Վրաստանն են, որոնց հետ մեզ կապում են էլեկտրահաղորդման 3 բարձր լարման գծեր (մեկ 220 կՎ

և երկու 110 *կՎ*), որոնցով մինչև 2007թ.-ը Վրաստան էր արտահանվում տարեկան միջին հաշվով 350 մլն *կՎտ-ժ* էլեկտրաէներգիա:



2007թ.-ից մինչև այժմ երկու երկրների միջև համագործակցությունն իրականացվել է միայն սեզոնային փոխանակումներով, սակայն այժմ Հայաստանը և Վրաստանը պետք է սկսեն 400/500 *կՎ* էլեկտրահաղորդման գծի կառուցումը, որը կկապի Վրաստանի Մառնեուլի ենթակայանը Հայաստանի Հրազդան ՋԷԿ-ի հետ, և տեղափոխվող էլեկտրաէներգիայի ծավալը 400 *կՎ* լարման առաջին շրջայի կառուցումից հետո կարող է աճել մինչև 650 *ՄՎտ*: Բարձր լարման գծերը կապահովեն նաև Վրաստանում արտադրված էլեկտրաէներգիայի մատակարարումը Հայաստանով Իրանին: Ներկայումս մեր ռազմավարական գործընկերը էլեկտրաէներգետիկայի ոլորտում Իրանն է, որը էլեկտրաէներգիա է արտահանում Հայաստան, Թուրքիա, Պակիստան, Իրաք, Աֆղանստան և ներկրում է Հայաստանից ու Ադրբեջանից: Հայաստանին և Իրանին կապում են 220*կՎ* էլեկտրահաղորդման երկու գծերը, որոնց առավելագույն գումարային հզորությունը կազմում է 450 *ՄՎտ*: Սկսվել է նաև 400 *կՎ* լարման էլեկտրահաղորդման երրորդ գծի կառուցումը: Էլեկտրահաղորդման երրորդ գծի հետ համատեղ գումարային հզորությունը կկազմի 1200 *ՄՎտ*:

Հայաստանից Իրան արտահանման հիմնական ծավալը կատարվում է մայիսից մինչև սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին, մինչդեռ մնացած ժամանակահատվածում ներկրումը գերազանցում է արտահանումը: Իրանի և ՀՀ կառավարության միջև էլեկտրաէներգիայի դիմաց գազի մատակարարման վերաբերյալ պայմանագրի ստորագրումից հետո Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի քանակությունն աճեց 4 անգամ: 2010թ. ապրիլին թողարկվեց ԵրՋԷՑ-ի նոր էներգաբլոկը, որն աշխատում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ գազով-էլեկտրաէներգիայի ապրանքափոխանակման սխեմայով: Էլեկտրաէներգիայի արտահանման ևս մի հեռանկարային շուկա (տնտեսական շրջափակումը հանելուց հետո) կարող է հանդիսանալ Թուրքիան:

Հաշվարկների արդյունքները վկայում են այն մասին, որ սկսած 2016թ.-ից մինչև 2030թ. էլեկտրաէներգետիկական համակարգի հզորությունը պետք է աճի 1518 *ՄՎտ*-ից մինչև 3800 *ՄՎտ*, առանց պաշարային հզորության, կամ շուրջ 4200 *ՄՎտ*, 10% պաշարի ապահովման պարագայում: Նման պայմաններում, իհարկե, առաջնահերթորեն պետք է օգտագործվեն տեխնիկապես և տնտեսապես արդարացված հիդրոէներգետիկ ռեսուրսները, որոնց դեռևս չօգտագործված հզորությունը գնահատվում է շուրջ 450 *ՄՎտ*, տարեկան 1,6 մլրդ. *կՎտ-ժ* արտադրանքով: Առաջնային պետք է համարել նաև վերականգնվող այլ ռեսուրսների ներգրավումը, ինչը տարբեր աղբյուրների հավաստմամբ՝ ՀՀ-ի համար չի գերազանցում 1,0 մլրդ. *կՎտ-ժ*-ը: Այսպիսով, Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգում, սկսած 2016թ.-ից, պետք սկսել կառուցել նոր սերնդի, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած էներգաարդյունավետ միջուկային և ջերմային էներգատեղակայանքներ, որոնք կարտադրեն տարեկան մոտ 9,0 մլրդ. *կՎտ-ժ* էլեկտրաէներգիա: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ միջուկային և ջերմային էներգատեղակայանքների մասնաբաժինները կախված կլինեն թե՛ բնական գազի գներից և թե՛ էներգետիկական սարքավորումների միջազ-

գային շուկայում մոտակա 2...3 տարիների ընթացքում գոյություն ունեցող միջուկային տեղակայանքների միավոր հզորություններից, դրանց մանրային բնութագրերից, անվտանգության աստիճանից և այլ անհրաժեշտ գործոններից:

տարի	Էլեկտրաէներգիայի արտադրանքի պակասորդ, մլրդ կՎտ	տեղական հզորության պակասորդ, ՄՎտ	տեղական հզորության պակասորդ +10% պահուստ, ՄՎտ	տեղական հզորության պակասորդ +20% պահուստ, ՄՎտ
2013	0,0	0	0	0
2014	0,0	0	0	0
2015	0,0	0	0	0
2016	0,9	150	176	191
2017	1,3	217	254	275
2018	1,9	317	371	402
2019	2,6	433	507	550
2020	3,5	583	683	741
2021	4,1	683	800	868
2022	5,0	833	975	1058
2023	5,2	867	1014	1101
2024	5,3	883	1034	1122
2025	5,5	917	1073	1164
2026	5,7	950	1112	1207
2027	1,8	300	351	381
2028	2,0	333	390	423
2029	2,2	367	429	466
2030	2,4	400	468	508



Նկ. 2. ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգում տեղակայված հզորության պակասորդ +10% և +20% պահուստների դեպքում

Ցավոք, ՀՀ-ն վերջին երկու տասնամյակներում կորցրեց կենտրոնական ջերմամատակարարման համակարգերը, ուստի այս հոդվածի շրջանակներում հնարավոր չէ կապակցել ջերմային (ջեռուցման նպատակով) և էլեկտրական էներգիաների համատեղ արտադրության առնչվող հիմնախնդիրները, ինչը, մեր կարծիքով, շատ ավելի խոր ուսումնասիրության կարիք ունի՝ պայմանավորված ներկայումս այդ դաշտի գրեթե ամբողջությամբ լիբերալացված լինելու և գոյություն ունեցող բնական մենաշնորհների հետ կոշտ մրցակցության հանգամանքներով:

Վերը շարադրվածի հիման վրա հանգում ենք հետևյալին.

1. Էներգետիկ անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման համար պահանջվում են կազմակերպչական, նյութական և ֆինանսական նշանակալի ռեսուրսներ, այդ թվում՝ նաև ֆիզիկապես ու բարոյապես մաշված արտադրական հզորությունների ու էլեկտրական ցանցերի սերնդափոխության համար, որոնք, անշուշտ, գերազանցում են Հայաստանի սեփական հնարավորությունները: Հետևաբար, կարևոր է առաջին հերթին իրականացնել այն բոլոր միջոցա-

ռումները, որոնք ապահովում են հնարավորինս փոքր ծախսումներով էներգետիկ անվտանգության բավարար մակարդակ:

2. Էներգամատակարարման բացարձակ անվտանգությունը հասանելի չէ ոչ մի երկրի, իսկ վերջինիս երաշխավորված ապահովման գինն անընդունելի բարձր է: Էներգամատակարարման անվտանգությունը կառավարության և հասարակության միջև գոյություն ունեցող հիմնական փոխզիջումներից մեկն է, որը տարբեր աստիճանի էներգամատակարարման հասնելու համար պետք է կապակցի անհրաժեշտ ծախսերը և հանրության կողմից դրանք վճարելու հնարավորությունը և ցանկությունը [2]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Organization of the black sea economic cooperation. Report of the meeting of the BSEC working group on energy BSEC headquarters, 8-9 april 2014. Sinem Çaynak, General Overview of the Turkish Energy Sector.
2. ՀՀ նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» N ՆԿ-182-ն կարգադրություն:
3. ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» N 442-Ն որոշում:

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ): Նյութը ներկայացվել է խմբագրություն 10.06.2014:

Г.В. ЦУГУНЯН, Л.С. ОГАННИСЯН

СОСТОЯНИЕ ЭЛЕКТРОЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ И ОСНОВНЫЕ ПУТИ РАЗВИТИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОГО ИНТЕГРИРОВАНИЯ

Проанализированы вопросы развития электроэнергетической системы Армении. Выявлены основные предпосылки долгосрочного развития энергетического сектора РА в контексте регионального интегрирования. Предложены пути решения рассматриваемых проблем.

Ключевые слова: электроэнергетика, энергетическая безопасность, энергетические ресурсы.

H.V. TSUGHUNYAN, L.S. HOVHANNISYAN

THE STATE OF THE ELECTROPOWER SYSTEM OF ARMENIA AND THE BASIC WAYS OF DEVELOPMENT IN THE CONTEXT OF REGIONAL INTEGRATION

Issues on the electropower system development in Armenia are analysed. The basic prerequisites of the long-term development of the RA power sector are revealed in the context of regional integration. Ways of solving the considered problems are proposed.

Keywords: electropower, power safety, power resources.

Ա.Ս. ՇԱՂԳԱՍՅԱՆ, Լ.Կ. ԲԵԳՈՑԱՆ

ԹՎԱՅԻՆ ՋԵՐՄԱՉԱՓ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԵՐԱՎԱՓՈԽՉՈՎ

Մշակվել է ջերմաէլեկտրական կերպափոխիչով աշխատող թվային ջերմաչափի կառուցվածքային սխեման, առաջարկված է ջերմաէլեկտրական կերպափոխիչի (ՋԿ) ստատիկ բնութագրի գծայնացման եղանակ, բերված են գծայնացման պարամետրերի հաշվարկի բանաձևերը և $TTP(R)$ տիպի ՋԿ-ի գծայնացման պարամետրերի հաշվարկների արդյունքները:

Առանցքային բառեր. թվային ջերմաչափ, ջերմաէլեկտրական կերպափոխիչ, գծայնացում:

Ջերմաստիճանի չափման համակարգերում լայն տարածում են ստացել ջերմաէլեկտրական կերպափոխիչները (ՋԿ), որոնք օգտագործվում են հիմնականում բարձր ջերմաստիճանների չափման համար: Շահագործման ընթացքում առաջանում է լրացուցիչ սխալանք՝ կախված շահագործման պայմաններից, այդ պատճառով անհրաժեշտ է իրականացնել ՋԿ-ի պարբերական ստուգաչափում: Սովորաբար այդ նպատակով ՋԿ-ները հանվում են օբյեկտից և ուղարկվում չափագիտական լաբորատորիա, ինչը պահանջում է լրացուցիչ ծախսեր, իսկ որոշ դեպքերում հանգեցնում է նաև օբյեկտի տեխնոլոգիական ռեժիմի խախտման: Նշված թերությունների վերացման համար նպատակահարմար է ՋԿ-ների ստուգաչափումն իրականացնել տեղում՝ օբյեկտի նույն ջերմաստիճանային դաշտում տեղադրելով համապատասխան ճշգրտությամբ տվիչ՝ ստուգաչափվող ՋԿ-ի հարևանությամբ: Ներկայումս արտադրվում են $KTXA$, $KTXK$, $KTHH$, $KTXA$, $KTJK$ տիպերի ՋԿ-ներ, որոնց պահպանիչ պատյանում նախատեսված է լրացուցիչ անցք՝ ճշգրիտ մալուխային տվիչ տեղադրելու համար: Մալուխային տվիչներն ունեն համեմատաբար բարձր չափագիտական բնութագրեր ու փոքր չափսեր և ներկայումս լայն տարածում են ստանում ջերմաստիճանի չափման ու հսկման համակարգերում [1]: Արդյունաբերական օբյեկտներում տեղադրված ՋԿ-ների ստուգաչափման նպատակով առաջարկվում է մշակել մալուխային տվիչներով աշխատող բարձր ճշգրտության թվային ջերմաչափ: Գործնականում $600^{\circ}C$ -ից բարձր ջերմաստիճանների չափման համար հիմնականում օգտագործվում են ՋԿ-ներ, որոնց սխալանքները մեծ են $1,5^{\circ}C$ -ից: Աղ. 1-ում բերված են արդյունաբերությունում օգտագործվող ՋԿ-ների թույլատրելի սխալանքների սահմանային արժեքներն ըստ ԳՕՍՏ 3044-94-ի [2]: Համաձայն ԳՕՍՏ 8.558-2009-ի [3]՝ ջերմաստիճանի 3-րդ կարգի աշխատանքային էտալոնի և աշխատանքային ՋԿ-ի վստահելի սխալանքների սահմանների հարաբերությունը պետք է լինի փոքր $0,5$ -ից, հետևաբար՝ մշակվող թվային ջերմաչափում օգտագործվող ՋԿ-ի ազատ ծայրերի ջերմաէլեկտրիկ համակշռման սխալանքը նպատակահարմար է ընտրել փոքր $0,25^{\circ}C$ -ից:

Թվային ջերմաչափների մշակման հիմնական խնդիրներից է տվիչների ոչ գծային ստատիկ բնութագրի գծայնացումը: Ներկայումս օգտագործվում են գծայնացման տարբեր եղանակներ: Մշակվող թվային ջերմաչափում նպատակահարմար է օգտագործել տվիչի ստատիկ բնութագիրը բեկյալով մոտարկելու եղանակը (նկ. 1): Մոտարկման ճշգրտությունը կախված է մոտարկման քայլից: Թվային ջերմաչափի սխեմայի պարզեցման նպատակով մոտարկումը կատարվում է հաստատուն քայլով՝ ըստ ջերմաէլշուի: Մոտարկող բեկյալի գազաթնթին համապատասխանող ջերմաստիճանների արժեքները գրանցվում են միկրոկոնտրոլերի հիշողությունում, իսկ մոտարկման j-րդ տեղամասի ներսում ջերմաստիճանի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\theta_{jx} = \theta_{j-1} + K_j(E_{jx} - E_{j-1}), \quad (1)$$

որտեղ θ_{j-1} -ը բեկյալի j-րդ տեղամասի սկզբնակետին համապատասխանող ջերմաստիճանն է, K_j -ն՝ բեկյալի թեքությունը j-րդ տեղամասում, E_{jx} -ը՝ բեկյալի j-րդ տեղամասի ներսում գտնվող չափվող ջերմաստիճանի ջերմաէլշուն, E_{j-1} -ը՝ բեկյալի j-րդ տեղամասի սկզբնակետին համապատասխանող ջերմաէլշուն:


Աղյուսակ 1

ՋԿ-ների սխալանքների սահմանային արժեքները

Ջերմաստիճանը, °C	ՋԿ-ների սխալանքի սահմանը, °C															
	BP (A-2)	ПР(В) 2-րդ դաս	ПП(С) 2-րդ դաս	ХА(К)		ХК(Е)		МК _и (Т)		ЖК(І)		СС(І)		НН(Н)		
				1-ին դաս	2-րդ դաս	1-ին դաս	2-րդ դաս	1-ին դաս	2-րդ դաս	1-ին դաս	2-րդ դաս	1-ին դաս	2-րդ դաս	1-ին դաս	2-րդ դաս	
100	-	-	1,5	1,5	2,5	1,5	2,5	0,5	1,0	1,5	2,5	1,5	2,5	1,5	2,5	
200	-	-	1,5	1,5	2,5	1,5	2,5	0,8	1,5	1,5	2,5	1,5	2,5	1,5	2,5	
300	-	-	1,5	1,5	2,5	1,5	2,5	1,2	2,25	1,5	2,5	1,5	2,5	1,5	2,5	
400	-	-	1,5	1,6	3,0	1,6	3,0	1,6	3,0	1,6	3,0	1,6	3,0	1,6	3,0	
600	-	1,5	1,5	2,4	4,5	2,0	4,5	-	-	2,4	4,5	2,4	4,5	2,4	4,5	
750	-	1,87	1,9	3,0	5,6	3,2	5,6	-	-	3,0	5,0	3,0	5,0	3,0	5,6	
800	-	2,0	2,0	3,2	6,0	4,0	6,0	-	-	3,2	6,0	3,2	6,0	3,2	6,0	
1000	7,0	2,5	2,5	4,0	7,5	-	7,5	-	-	-	-	-	-	4,0	7,5	
1200	8,4	3,0	3,0	-	9,0	-	9,0	-	-	-	-	-	-	-	-	
1600	11,2	4,0	4,0	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
1700	11,9	4,25	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
1800	12,6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
2200	15,4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	

Ներկայումս արտադրվող ՋԿ-ներից ամենաբարձր ճշգրտությունն ունեն պլատինային խմբի ՋԿ-ները: Նպատակահարմար է ընտրել պլատին-պլատինառողիումային ТПП (R) տիպի ՋԿ, որը նախատեսված է մինչև 1800 °C ջերմաստիճան չափելու համար: ՋԿ-ի ստատիկ բնութագրի մոտարկման ֆունկցիայի գազաթնթին արժեքների

օպտիմալ ընտրության համար նպատակահարմար է մոտարկման քայլն ըստ ջերմա-
էջուի ընտրել այնպիսին, որ դրա ուժեղացված արժեքն արտահայտվի 2^k թվով:




Նկ. 1. ՋԿ-ի ստատիկ բնութագրի մոտարկումը բեկյալով

Մոտարկման սխալանքը թույլատրելի սահմաններում ստանալու նպատակով ընտրում ենք $k=13$, որը $\theta > 600^\circ\text{C}$ տիրույթում համապատասխանում է մոտավորապես 68°C ջերմաստիճանին: Նկատի ունենալով, որ ՋԿ-ները հիմնականում օգտագործվում են բարձր ջերմաստիճանների չափման համար, կարելի է ստատիկ բնութագրի մոտարկումը բեկյալով սկսել $N_x=2048$ թվին համապատասխան ջերմաստիճանից ($112,33^\circ\text{C}$), իսկ մոտարկման քայլն ընտրել $\Delta N=2048$: Աղ. 2-ում բերված են պլատին-պլատինառողիումային ՋԿ-ի (R տիպի) ստատիկ բնութագրի մոտարկման տվյալները:

Թվային ջերմաչափի կառուցվածքային սխեման բերված է նկ. 2-ում: ՋԿ-ի ջերմաէջուն ուժեղացվում է DA1 սարքային ուժեղարարով (ՄՈւ) և միաժամանակ կատարվում է ջերմագույգի ազատ ծայրերի ջերմաէջուի ավտոմատ համակշռում R1-R5 ռեզիստորներով կառուցված կամրջակային սխեմայով: ՄՈւ-ի ելքային լարումը տրվում է DA2 անալոգաթվանշանային կերպափոխիչին (ԱԹԿ), որի ելքում ստացվում են ջերմաէջուի երկուսկան կոդերը: Ներկայումս չափիչ սարքերում լայնորեն օգտագործվում են սիգմա-դելտա ԱԹԿ-ները, որոնք ունեն բարձր ճշգրտություն և աղմկապաշտպանվածություն: Այդ ԱԹԿ-ների հիմնական բնութագրերից են ելքային կոդի կարգերի թիվը, աղմուկից գերծ կոդի կարգերի թիվը, մուտքային լարման դինամիկ տիրույթը, հենային լարման արժեքը, ներքին աղմուկների միջին քառակուսային արժեքը: Սիգմա-դելտա ԱԹԿ-ի ելքային կոդին համապատասխան թիվը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$N_x = \frac{U_{\text{ս}}}{q} = \frac{U_{\text{ս}}}{U_{\text{հ}}/2^n} = 2^n U_{\text{ս}}/U_{\text{հ}}, \quad (2)$$

որտեղ $U_{\text{ս}}$ -ն ԱԹԿ-ի մուտքային լարումն է, $U_{\text{հ}}$ -ն՝ ԱԹԿ-ի հենային լարումը, q -ն՝ ԱԹԿ-ի մուտքային լարման քվանտը, n -ը՝ ԱԹԿ-ի կոդի կարգերի թիվը:



Նկ. 2. Թվային ջերմաչափի կառուցվածքային սխեման

Եթե ԱԹԿ-ի կողի կարգերի թիվն ընտրենք $n=16$, ապա ԱԹԿ-ի կողին համապատասխան ամենամեծ թիվը կստացվի՝ $N_{xm}=65536$: Հետևաբար՝

$$N_x = 65536 U_0/U_h: \quad (3)$$

Եթե ԱԹԿ-ի հենային լարումն ընտրենք հավասար $U_h=2,62144$ Վ, ապա կստանանք՝ $q=40$ մկՎ, $N_x=U_0/40$ (որտեղ U_0 -ը արտահայտվում է մկՎ-ով): Քանի որ ԱԹԿ-ի մուտքային լարումն ուժեղացվում է K_m ուժեղացման գործակցով, ապա ԱԹԿ-ի էլքային կողին համապատասխան թիվը կստացվի՝

$$N_x = K_m E(\theta, 0)/40, \quad (4)$$

որտեղ $E(\theta, 0)$ -ն ՋԿ-ի ջերմաէլեկտրի ստանդարտացված արժեքն է ըստ ԳՕՍՍ 3044-ի [2]:

Գործիքային ուժեղարարն ընտրվել է INA333 տիպի: Եթե ուժեղարարի ուժեղացման գործակիցն ընտրենք $K_m=100$, իսկ $E(\theta, 0)$ -ն արտահայտվի մկՎ-ով, ապա կստանանք՝

$$N_x = 2,5 E(\theta, 0): \quad (5)$$

Աղ. 2-ում բերված են պլատին-պլատինառողիումային ՋԿ-ի ստատիկ բնութագրի մոտարկման բեկյալի գագաթներին համապատասխան ջերմաստիճանների և դրանց համապատասխան էլքային կողի թվային արժեքներն ու դրանց երկուական կոդերը, ինչպես նաև մոտարկման տեղամասերի K_j^* զգայնությունները (բեկյալների թեքությունները): Մոտարկման տեղամասերի K_j^* զգայնությունները որոշվել են հետևյալ բանաձևով՝

$$K_j^* = (\theta_j - \theta_{j-1}) / (N_j - N_{j-1}) = (\theta_j - \theta_{j-1}) / 2048, \quad (6)$$

որտեղ N_{j-1} -ը և N_j -ն մոտարկման j -րդ տեղամասի սկզբնական և վերջնական համապատասխան թվային արժեքներն են (աղ. 2):

Պլատին-պլատինառողիումային ՋԿ-ի ստատիկ բնութագրի մոտարկման տվյալները և բեկյալի զագաթների ջերմաստիճանների ջերմաէլշունների երկուական կոդերը

j	N _j	Θ _j , °C	E _j ,մՎ	N _j -ի 2-ական կոդը					K _j [*] , °C	ΔΘ _j , °C
				2 ¹⁵	2 ¹⁴	2 ¹³	2 ¹²	2 ¹¹		
1	2048	122,33	0,8192	0	0	0	0	1	0,05973	0,09
2	4096	218,95	1,6384	0	0	0	0	0	0,04717	0,08
3	6144	305,86	2,4576	0	0	0	1	1	0,04243	0,07
4	8192	387,38	3,2768	0	0	0	1	0	0,03981	0,06
5	10240	465,35	4,096	0	0	1	0	1	0,03807	0,06
6	12288	540,45	4,9152	0	0	1	0	0	0,03667	0,06
7	14336	613,25	5,7344	0	0	1	1	1	0,03555	0,10
8	16384	683,03	6,55360	0	0	1	1	0	0,03407	0,06
9	18432	752,50	7,37280	0	1	0	0	1	0,03392	0,08
10	20480	819,50	8,19200	0	1	0	0	0	0,03271	0,02
11	22528	880,50	9,01120	0	1	0	1	1	0,02978	0,06
12	24576	948,50	9,83040	0	1	0	1	0	0,03320	0,04
13	26624	1010,5	10,6496	0	1	1	0	1	0,03027	0,08
14	28672	1070,5	11,4688	0	1	1	0	0	0,02929	0,08
15	30720	1132,0	12,2880	0	1	1	1	1	0,03002	0,02
16	32768	1196,0	13,1072	0	1	1	1	0	0,03125	0,10
17	34816	1250,0	13,9264	1	0	0	0	1	0,02637	0,02
18	36864	1309,0	14,7456	1	0	0	0	0	0,02881	0,06
19	38912	1367,2	15,5648	1	0	0	1	1	0,02842	0,01
20	40960	1425,2	16,3840	1	0	0	1	0	0,02832	0,04
21	43008	1483,8	17,2032	1	0	1	0	1	0,02861	0,02
22	45056	1541,4	18,0224	1	0	1	0	0	0,02812	0,04
23	47104	1600,8	18,2416	1	0	1	1	1	0,02900	0,00
24	49152	1659,0	19,6608	1	0	1	1	0	0,02841	0,04
25	51200	1719,8	20,4800	1	1	0	0	1	0,02968	0,02
26	53248	1779,8	21,2992	1	1	0	0	0		

Եթե K_j^* զգայնության արժեքները կլորացնենք 5 նշվող թվանշանով, ջերմաստիճանի չափման սխալանքը կստացվի փոքր 0,1 °C-ից (ամենամեծ արժեքները կստացվեն մոտարկող բեկյալի զագաթներին մոտ կետերում, դրանք բերված են աղ .2-ի ΔΘ_j սյունակում):

Ընտրված պարամետրերի դեպքում մոտարկման տեղամասերի միջանկյալ արժեքների համար կստանանք՝

$$\theta_{jx} = \theta_{j-1} + \Delta\theta_{jx} = \theta_{j-1} + K_j(E_{jx} - E_{j-1}) = \theta_{j-1} + K_j^*(N_{jx} - N_{j-1}), \quad (7)$$

որտեղ $\Delta\theta_{jx} = K_j^*(N_j - N_{j-1})$ –մոտարկման j-րդ տեղամասի ներսի կոդին համապատասխանող լրացուցիչ ջերմաստիճանային աճի արժեքն է, N_{jx}-ը՝ մոտարկման j-րդ տեղամասի ներսի կոդին համապատասխանող թիվը:

Օրինակ, եթե N_{jx}=11240, ապա j=6, եթե Θ_{j-1}=465,35 °C, $K_j^*=0,03667$ °C, N_{jx} - N_{j-1}=1000, ապա կստանանք՝ Θ_{jx}=36,67 °C, Θ_{jx}=502,02 °C:

Միկրոկոնստրուկտի (DD1) միջոցով ԱԹԿ-ի ելքային կոդի 2^{11} -ից մինչև 2^{15} կշռային գործակիցների կարգերով կորոշվեն մոտարկման տեղամասի j համարը, այդ տեղամասի սկզբի գագաթի ջերմաստիճանն ու K_j^* զգայնությունը, իսկ 2^0 -ից մինչև 2^{10} կշռային գործակիցների կարգերով՝ մոտարկման տեղամասի ներսում $\Delta\theta_{jx}$ ջերմաստիճանների արժեքները, և բանաձև (7)-ով կորոշվի չափվող ջերմաստիճանը:

Միկրոկոնստրուկտում հաշվարկները ամբողջ թվերով կատարելու համար կարելի է 10^5 անգամ մեծացնել θ_j ջերմաստիճանների ու K_j^* զգայնության արժեքները, հետո՝ վերջնական արժեքը բաժանել 10^5 -ի:

ԱԹԿ-ի ընտրությունը կատարվում է՝ ելնելով ադմոկից գերծ կոդի ցածր կարգի միավորի պահանջվող արժեքից, որը տվյալ դեպքում 40 մկՎ է: Արտադրվող ԱԹԿ-ներից նպատակահարմար է ընտրել AD7715 տիպի սիգմա-դելտա ԱԹԿ (DA2), որի հենային լարումը 2,5 Վ է, իսկ կերպափոխման հաճախությունն ընտրվում է 2 կերպ/վրկ [4]: ՋԿ-ի ազատ ծայրերի ջերմաէլեկտրիկ ավտոմատ համակշռման կամրջակային սխեման սնվում է բարձր ճշգրտության լարման պարամետրական կայունարարից, որը կառուցված է КЦ108В տիպի ստաբիլիտրոնի վրա (կայունացման լարման ջերմաստիճանային գործակիցը փոքր է 0,0005 %/°C-ից): Հետևաբար՝ ԱԹԿ-ի հենային լարումը նպատակահարմար է ստանալ ստաբիլիտրոնին միացված լարման բաժանիչից (R9-R11):

ԳՐԱԿՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Каржавин В.А., Каржавин А.В. Методика периодической поверки термоэлектрических преобразователей непосредственно на термометрируемом объекте. temperatures.ru/pdf/tesey.pdf
2. ГОСТ 3044-94. Преобразователи термоэлектрические. Номинальные статические характеристики преобразования. - 200 с.
3. ГОСТ 8.558-2009. Государственная поверочная схема для средств измерений температуры. - 10 с.
4. http://www.analog.com/static/imported-files/data_sheets/AD7715.pdf

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ): Նյութը ներկայացվել է խմբագրություն 10.04.2014:

А.С. ШАХКАМЯН, Л.К. БЕГОЯН

ЦИФРОВОЙ ТЕРМОМЕТР С ТЕРМОЭЛЕКТРИЧЕСКИМ ПРЕОБРАЗОВАТЕЛЕМ

Разработана структурная схема цифрового термометра, работающего с термоэлектрическим преобразователем (ТП). Предложен метод линеаризации статической характеристики ТП. Приведены формулы для расчета параметров линеаризации и результаты расчета для ТП статической характеристики ПП (R).

Ключевые слова: цифровой термометр, термоэлектрический преобразователь, линеаризация.

A.S. SHAGHGAMYAN, L.K. BEGOYAN

A DIGITAL THERMOMETER WITH A THERMOELECTRIC TRANSDUCER

The block diagram of a digital thermometer is developed operating with a thermoelectric transducer. A method for linearizing the static characteristics of TT is proposed. Formulae for calculating the linearization parameters and the calculation results for TT static R characteristics are introduced.

Keywords: digital thermometer, thermoelectric transducer, linearization.

AFRA MOSATAFAEI

**MODELING THE ENERGY MANAGEMENT SYSTEM TAKING INTO
ACCOUNT THE LOAD CHARACTERISTICS AND ECONOMIC
PERFORMANCE**

Electrical load management (ELM)[3] is one of the most basic and most important branches of demand side management (DSM)[3]. Energy management in the proposed system is carried out by load management. Load management techniques divided into three main categories - load shading, valley filling and load shifting. However, these methods are used depending on the load type and the desired policy of the government and also considering the possibility of the methods used, taking into account that the most effective and popular method is load shading. In the proposed method, the outputs of the optimal sizing using the algorithm of Particle Swarm Optimization (PSO)[2] allowing to choose the number of wind generator (WG)s, modules of photovoltaic (PV) and batteries. The number of variables must be optimized in such a way that the ultimate 20-year cost of using the system is equal to the lowest possible value.

Keywords: load management, hybrid system, energy efficiency, PSO algorithm (Particle Swarm Optimization).

Introduction. Because of the discontinuous characteristic of wind and solar radiation, the most important issue in designing such systems is to supply reliable load under different atmospheric conditions according to the costs involved. Due to the diversity in types of commercially available of the PVs, WGs and batteries, the aim to select the number and type of equipment intended to supply continuous load with minimum costs will be achieved.

The purpose of this study is selecting the combination from among existing commercial equipment's of the hybrid system studied for a complete coverage of the load in a period of 20 years. The best combination is a compound that has the lowest cost during the study period. These costs will include the cost of investment and maintenance. Optimization variables are the number of PV modules, number of WG turbines and the battery capacity needed. There are various algorithms and optimization techniques, but we suggest using PSO algorithm having in our opinion, a great potential. This algorithm is a relatively new algorithm and its introduction goes back to 1995 [1]. This algorithm is based on Social Intelligence of the organisms that live in mass. The advantages of PSO to the genetic algorithm, in terms of speed and in terms of not being stuck in local extremes are shown. The above interpretations were motivated that in the present study, instead of using a genetic algorithm a PSO

algorithm is used. For organizing the simulation of the system energy management, we need to create formal models of the investigated object, the formulations of the system consist of the modeling systems.

Load management and methods of its application. A method applied to this system in the energy management is described below [3].

Dimensions of demand side management: 1. Load management. 2. Energy efficiency. 3. Energy revival. 4. Virtual power plant

Now, we'll explain these cases:

1. Load management

The goal of load management is to adjust the load curve with one of the following methods:

- Load Shading - Valley Filling - Load Shifting

The tools needed to achieve these goals include:

Load clipping programs. This includes the following items:

1. Interruptible demands: load of this kind of clients will be disconnected remotely or other methods under the previous agreements by receiving a payment.
2. Direct load management control: in this method of operation, the system will disconnect certain loads of customers in accordance with the prior notice to the customer's address and prior agreement and pay him with this load clipping which is related to regional conditions and load curve is the final goal of the network.
3. Demand bidding/buy-back: In this way, according to previous agreements of the large customers who previously had won the bid, we do not use their capacity during the peak and get a higher price from the entity responsible.
4. Emergency demand response: These programs create incentives for customers to reduce load in the events when the load cutoff can also optionally be included. On the whole, this program is voluntary, and customers will not be fined if they do not interrupt their load and the final group of power network for its planning on these programs does not count.
5. Load reduction proportional to the capacity: in this program, customers are obliged to reduce their load with the receipt of funds in some events and otherwise are fine. But customers for this case offer a fixed price and accordingly the resources that are quickly exploited, are predicted.
6. Utilities: This program focuses on operational reliability as a source of great possibilities with regard to this issue that programmers extend the ideas of measuring the long-term and seasonal reliability in time of criteria development.

- **Dynamic pricing program:**

1. Pricing based on consumption of the Time Of Use (TOU)

2. Critical Peak Pricing (CPP).

3. Real Time Pricing (RTP).

Other load management tools can be mentioned the following:

- Storage techniques such as Ice storage, Heat Storage, Pump Storage
- Production relocation planning
- Voluntary load reduction programs
- Attachment work programs included daily and weekly

2. Energy efficiency

The goal of energy efficiency is the following figure, showing the increase in the electric energy efficiency both in production and consumption.

However, this aspect of consumption management includes the following ways:

1. Low consumption lamps
2. Lighting Control Systems
3. Water pumps and motors with adjustable speed
4. Transformers with high efficiency
5. Storage in the final consumer devices: furnishings and buildings and boiling engines and pumps and ventilation systems, etc.

3. Energy revival

In this section, methods such as the following can be considered:

1. Changing the settings of the thermostats
2. Reducing work hours

4. Virtual power plants:

1. CHP (combined Heat and power)
2. DG (Distribute Generation)

With regard to the descriptions in this section, we can say that load management techniques are the three main categories of load shading, valley filling and load shifting. However, these methods are used depending on the load type and the desired policy of the government and also considering the possibility of developing whichever method is possible, but an effective and popular method is load shading. The comparison of the energy management with the load management and without applying the load management is done by this procedure.

Modeling and simulation of system performance PV/WG (photovoltaic/Wind generator). In the study conducted as shown in [4], the system performance is simulated with time steps of 1 hour for one year. Power generated by PV and WG during each time step is assumed constant. Thus, the power generated by renewable energy sources will be numerically equal to the energy produced during the time step. Characteristics of the current – voltage and power - voltage of a PV array for each production unit shown in Figure 1[4] is composed of parallel modules NP and series modules NS. The maximum power output of the PV array $P_M^i(t)$, on the i-th day

($1 \leq i \leq 365$) and at the t -th hour ($1 \leq t \leq 24$), using the module specification in the standard test conditions (STC, cell temperature of 25°C and radiation of 1 kW/m^2) provided by the manufacturer, is calculated. Using the ambient temperature and solar radiation, following equations[4] clearly express the behavior of a module.

$$P_M^i(t) = N_s \cdot N_p \cdot V_{OC}^i(t) \cdot I_{SC}^i(t) \cdot FF^i(t), \quad (1)$$

$$I_{SC}^i = \{I_{SC,STC} + K_I [T_C^i(t) - 25^\circ\text{C}]\} \frac{G^i(t)}{1000}, \quad (2)$$

$$V_{OC}^i(t) = V_{OC,STC} - K_V \cdot T_C^i(t), \quad (3)$$

$$T_C^i(t) = T_A^i(t) + \frac{NCOT - 20^\circ\text{C}}{800} G^i(t), \quad (4)$$

2. Терзян А.А., Сукиасян Г.С., Акопян А.Э., Об оптимизации тетраэдральной сетки для расчета трехмерных магнитных полей методом конечных элементов. // Известия НАН РА и ГИУА. Сер. ТН. - 2008. - Т. 61, №2. – С. 305-317.
3. Делоне Б.Н., О пустоте сферы // Изв. АН СССР. ОМОН. - 1934.- №4. - С.793–800.

ГИУА (ПОЛИТЕХНИК). Материал поступил в редакцию 20.09.2014.

Հ.Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԴԵԼՈՆԵԻ ԵՌԱՆԿՈՒՆԱՊԱՏՄԱՆ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Վերջավոր տարրերի մեթոդով էլեկտրամագնիսական դաշտի ավտոմատացված որոշման համար կիրառվում են եռանկյունային դիսկրետացիոն ցանցեր: Ոչ գծային դաշտային խնդիրների համար հաջորդական մոտարկումների զուգամիտման գործընթացը կախված է ցանցի երկրաչափական հատկություններից: Ուսումնասիրված է եռանկյունային ցանցերի մի կարևոր դաս՝ Դելոնեի եռանկյունապատումները: Ապացուցված է, որ Դելոնեի եռանկյունապատումը մինիմալացնում է իր բոլոր եռանկյունների բոլոր անկյունների կոտանգենսների գումարը: Այդ էքստրեմալ հատկությունը կիրառված է ցանցից կախված գծային հավասարումների համակարգերի լուծման գործընթացի վերլուծության համար: Ցույց է տված, որ վերջավոր տարրերի մեթոդով էլեկտրամագնիսական դաշտի որոշման խնդրի դեպքում հանգույցների տվյալ բազմության համար բոլոր հնարավոր ցանցերից Դելոնեի եռանկյունապատումն է ամենալավը՝ հաջորդական մոտարկումների զուգամիտման գործընթացի արագության իմաստով:

Առանցքային բառեր. էլեկտրամագնիսական դաշտ, վերջավոր տարրերի մեթոդ, եռանկյունային ցանցեր, Դելոնեի եռանկյունապատում:

H. S. SUKIASYAN

**THE EXTREMAL PROPERTY OF DELAUNAY TRIANGULATION AND ITS
APPLICATIONS IN FIELD PROBLEMS**

At solving field problems by the finite-elements method, the triangular digitized meshes are applied. The convergence of the automated process of successive approximation aimed at solving nonlinear problems strongly depends on the mesh configuration. In this paper, an important class of triangular meshes is investigated - the Delaunay triangulation. It is proved that the Delaunay triangulation minimizes the sum of the cotangent angles of all its triangles. This extremal property is applied at analyzing the solving process for systems of linear equations depending on the mesh. It is shown that for the problem of numerical determination of the electromagnetic field by the finite-elements method at the given set of knots, the optimal mesh is the Delaunay triangulation (in respect of the speed of successive approximation process).

Keywords: electromagnetic field, finite-elements method, triangular meshes, Delaunay triangulation

ՀՏԴ 621.52

ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կ.Ս. ԱՄԻՐՊԱՆՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՆՍՈՒՇՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄՈՂԵԼԻ ԱՎՏՈՄԱՏ
ԴՈՒՐՄԲԵՐՈՒՄԸ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ GDSII ՁԵՎԱԶԱՓԻ ՖԱՅԼԻՑ

Տրված է ծրագրային հոսքի (ՕՀ) նկարագրությունը (program flow), որը հնարավորություն է տալիս ավտոմատ կերպով ստանալ ստատիկ պատահական դիմումով հիշողության (ՄՊԴՀ) նմուշի կառուցվածքային մոդելը այդ հիշողության նմուշի արտադրության մեջ օգտագործվող **GDSII** (Graphic Database System) ձևաչափով ներկայացված ֆայլից: Ներկայացված են ծրագրային միջավայրի ֆունկցիոնալ, կառուցվածքային սխեմաները, մոդելի դուրսբերման առնչվող հիմնախնդիրները, բարդությունները և սահմանափակումները: Բերված են փորձերի արդյունքները:


Առանցքային բառեր. կառուցվածքային մոդել, հիշողության նմուշ, նմուշի **GDSII** ձևաչափ, ծրագրային միջավայր, ՄՊԴՀ, կառուցվածքային տիպեր:

Ներածություն. Ժամանակակից կիսահաղորդչային սարքերի բնորոշ հատկություններից մեկն այն է, որ դրանք ընդգրկում են մեծ քանակությամբ ներդրված հիշողության սարքեր (ՀՄ)՝ ՄՊԴՀ-ներ: Հետագա շարադրանքում, ասելով ՀՄ, նկատի կունենանք միայն ՄՊԴՀ տիպի հիշողությունները: Այդ ՀՄ-երի քանակը կարող է հասնել հազարների, որոնք բազմաթիվ գործառնություններ են կատարում սարքավորումներում: Ներդրված հիշողության բջիջների (ՆՀԲ) գումարային քանակը շատ դեպքերում կազմում է մի քանի միլիոն: Ընդ որում, հիշողության բջիջների քանակը սարքերում տարեցտարի անընդհատ աճում է և ըստ վիճակագրական տվյալների [1]՝ 2015 թ. ՆՀԲ-երը կգրադենեն էլեկտրոնային սարքերի ֆիզիկական մակերեսի մոտ 70-80%-ը (նկ. 1): Որպեսզի առավելագույնս նվազեցվի հիշողության բջիջներով զբաղված սարքերի թիթեղի մակերեսը, այդ բջիջների կառուցվածքը՝ տոպոլոգիան (layout), նախագծվում է առավելագույնս խիտ:

Այսպիսով, հիշողության բջիջների երկու առանձնահատկությունները՝ կառուցվածքի խտությունը և զբաղեցրած մակերեսը, նախագծվող սարքերի հիշողություն պարունակող տարածքում արտադրության ընթացքում առաջացած անսարքությունների (արատների) բարձր հավանականության պատճառներն են:

Հաշվի առնելով այն փաստը, որ նույնիսկ կատարյալ պայմաններում անհնար է ստանալ արտադրվող միկրոսխեմաների 100% արտադրության օգտակար ելք, դժվար չէ կռահել, որ արտադրության խտանի հիմնական պատճառը հիշողության սարքերի մասում առաջացած արտադրական և շահագործման անսարքություններն են: Հիշողության սարքերի արտադրության օգտակար ելքի ավելացման նպատակով վերջին


տարիներին հիշողության սարքերում տեղադրվում են լրացուցիչ այսպես կոչված, ավելցուկային հիշողության բջիջներ պարունակող տողեր և սյուներ: Հետագայում դրանք օգտագործվում են անսարք բջիջների աշխատանքը (տողերը կամ սյուները) վերականգնելու նպատակով (Built-in Repair Algorithm-BIRA):



Նկ. 1. Հիշողության մասնաբաժնի քանակը էլեկտրոնային սարքերում (կանխագուշակում՝ ըստ ITRS.net կայքի)

Նույն նպատակով հիշողության սարքերում տեղադրվում են ներկառուցված (embedded), հիշողության հետ միաժամանակ պատրաստվող, լրացուցիչ էլեկտրոնային սխեմաներ, որոնց նպատակն է հիշողության հանգույցների ինքնաթեստավորումը, անսարքությունների հայտնաբերումը (Built-in Self Test –BIST) [1-3], և, հնարավորության դեպքում, հիշողության աշխատունակության վերականգնումը:

ՀՄ-երի աշխատանքի ընթացքում ի հայտ են գալիս մի շարք ավտոմատացման խնդիրներ, ինչպիսիք են՝ հիշողության թեստավորումը, հիշողության բջիջների կոորդինատների հաշվարկը, նախագծի մեջ օգտագործվող հիշողության սարքերի օպտիմալ տեսակների և կոնֆիգուրացիաների որոշումը, նախագծի և, մասնավորապես, հիշողության սարքի արտադրության օգտակար ելքի կանխատեսման հաշվարկը և վերլուծումը: Նշված խնդիրները պահանջում են տիրապետել և համապատասխան ծրագրային միջոցներում օգտագործել հիշողության կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունները: Հիշողության կառուցվածքային տեղեկատվությունը (ՀԿՏ) գտնվում է հիշողության արտադրության մուտքային տեղեկություն պարունակող կառուցվածքային ֆայլում, որը ստեղծվում և պահվում է համակարգիչներում գրաֆիկական GDSII ձևաչափով: Նկ. 2-ում ներկայացված է հիշողության սարքի նմուշի գրաֆիկական GDSII ձևաչափի օրինակը: GDSII տեսակի գրաֆիկական ձևաչափը ծավալուն է, և այդ ֆայլի մշակումը այլ ծրագրային միջոցներով անչափ անհարմար է ու ժամանակատար:



Նկ. 2. Հիշողության սարքի նմուշի օրինակ՝ GDSII ձևաչափ.

1. միացման Մուտքային/Ելքային բջիջներ, 2. տողերի ապակողավորման սխեմա, 3. սյուների ապակողավորման սխեմա, 4. հիշողության բջիջներ՝ խմբավորված ՀՄ-ի աջ մասում, 5. հիշողության բջիջներ՝ խմբավորված ՀՄ-ի ձախ մասում

Ծրագրային այլ միջոցներով աշխատանքի ժամանակը էապես պակասեցնելու նպատակով ստեղծվում է հիշողության նմուշի GDSII ձևաչափի պարզեցված կառուցվածքային մոդելը: Մոդելը կառուցված է տեքստային TXT ձևաչափով և, համապատասխան ստուգումից հետո [4], հետագայում օգտագործվում է այլ կիրառական ծրագրերում [5,6]:

Հիշողության մոդելը բաղկացած է երկու՝ հիշողության վարքագծային և կառուցվածքային մասերից [4]: Աշխատանքում ներկայացվող ծրագրային միջավայրը հնարավորություն է տալիս ավտոմատ ձևով ստանալ *կառուցվածքային մոդելը*: Կառուցվածքային մոդելը կազմող կառուցվածքային տիպերը և դրանց հատկությունները մանրամասնորեն ներկայացված են [4]-ում: Այստեղ պարզապես կթվարկենք այդ կառուցվածքային տիպերից հիմնականները.

1. հասցեի խճողման ծածկագրում (address scrambling),

2. բանկերի ապակողավորման ֆունկցիա (banks scrambling),
3. տողերի ապակողավորման ֆունկցիա (rows scrambling),
4. սյուների ապակողավորման ֆունկցիա (columns scrambling),
5. Մուտքային/Ելքային ելուստների բաշխում (I/Os distribution),
6. True և Bar բիթային լարերի դասավորություն (True and Bar bit line ordering),
7. բիթային լարերի ոլորումների բաշխում (bit line twisting distribution),
8. սյուների ոլորումների բաշխում (column twisting distribution),
9. բառային լարերի ոլորումների բաշխում (word line twisting distribution),
10. տողերի ոլորումների բաշխում (rows twisting distribution),
11. տրամաբանական սխեմաների բաշխում (straps distribution),
12. ավելցուկային տողերի և սյուների բաշխում (redundancy rows and columns distribution),
13. դատարկ՝ պաշտպանիչ, հավասարակշռող տողերի և սյուների բաշխում (dummy rows and columns distribution):


Ակնհայտ է, որ ՀՄ-երի զարգացման հետ միասին թվարկված կառուցվածքային տիպերի տեսակները ենթակա են փոփոխման և լրացման:

Կառուցվածքային մոդելի ավտոմատ դուրսբերման ծրագրային միջավայրի ֆունկցիոնալությունը և հիմնական դրույթները: Այսպիսով, կառուցվածքային մոդելը բոլոր ՆՀՄ սարքերում աշխատող ծրագրային միջոցների պարտադիր բաղադրամաս է: Մեկ այլ բարդ և կարևորագույն խնդիր է այդ մոդելի ճշտության ստուգումը: Ներկայումս էլեկտրոնային սարքերը նախագծելիս ՆՀՄ-երի կառուցվածքային մոդելը գեներացվում է ՀՄ-ն նախագծողի կողմից (manual method) կամ էլ՝ ավտոմատ կերպով մի շարք ծրագրային մեթոդներով: Կառուցվածքային մոդելի՝ նախագծողի կողմից գեներացված մեթոդի բացասական կողմերից են՝ 1. ճարտարագետից պահանջվում է ունենալ բարձր որակավորում և սպառիչ, լիարժեք տեղեկություն ՀՄ կառուցվածքի մասին, 2. ստացված մոդելը պարտադիր կերպով պետք է անցնի ստուգման (վավերացման) փուլ, որն էլ հանգեցնում է լրացուցիչ ռեսուրսների ծախսերի:

Կառուցվածքային մոդելի ավտոմատ գեներացման մեթոդը գերծ է վերոնշյալ թերություններից, բայց պահանջում է ավտոմատ ծրագրային միջոցների՝ միջավայրի ստեղծում: ՄՊՀ-երի հատկություններից է այդ սարքերի կանոնավոր կառուցվածքը, որը մեծ խոչընդոտ է կառուցվածքային մոդելի ավտոմատ դուրսբերման համար: Այդ խոչընդոտը շրջանցելու նպատակին է ծառայում հիշողության բջիջների «ծրագրավորման»՝ բջիջների անորոշ պարունակությունը հարկադրաբար, նախապես որոշված տրամաբանությամբ հաստատուն զրո կամ մեկ արժեքներից որևէ մեկի մեջ ձևափոխման գաղափարը [7]:

Նկ. 3-ում բերված է ՀՄ-երի նմուշի գրաֆիկական GDSII ձևաչափից կառուցվածքային մոդելը դուրս բերող ծրագրային միջավայրի ֆունկցիոնալ սխեման: ՀԿՄ-ը

ստանալու նպատակով նախագծված ծրագրային միջավայրը կատարում է հետևյալ գործողությունների հաջորդականությունը.



Նկ. 3. Կառուցվածքային մոդելը դուրս բերող ծրագրային միջավայրի ֆունկցիոնալ սխեմա

1. Նմուշի կոնֆիգուրացիայի վերլուծությունը, որի արդյունքում գեներացվում են նմուշի ծրագրավորման ֆայլերը (ՄՖ): Գեներացված ՄՖ-երն ունեն տեքստային ձևաչափ և պարունակում են տեքստային տեղեկություն հիշողության մեջ ծրագրավորվող օրինակների (ՄՕ) (programmed pattern) վերաբերյալ: Այդ օրինակների քանակը փոփոխական է և կախված է հիշողության նմուշի ֆիզիկական չափերից: Լավագույն տարբերակում այդ քանակը հավասար է երկուսի՝ զրոյական և անկյունագծային (նկ. 4), իսկ վատագույն դեպքում կարող է հասնել մինչև հինգի: Լավագույն դեպք է համարվում հիշողության նմուշի այն ֆիզիկական կառուցվածքը, երբ հիշողության բջիջներով զբաղեցված մակերեսը քառակուսի է, այսինքն՝ ֆիզիկական տողերի և սյուների քանակը նույնն է: Այս դեպքում հնարավոր է դառնում մեկ ծրագրավորող «անկյունագծային» օրինակով ծածկել հիշողության ողջ մակերեսը: Նկ. 4-ում ներկայացված են օրինակներ զրոյական և անկյունագծային ՄՕ-երը 8 տող և 8 սյուն պարունակող հիշողության նմուշի համար: Զրոյական ՄՕ-ն պարտադիր է նմուշների բոլոր տարբերակների համար: ՄՕ-երը մանրամասնորեն նկարագրված են [7]-ում:

2. Օգտագործելով ստացված ԾՕ-երը՝ ծրագրային հոսքը կատարում է նմուշի


00000000	11111111	գրաֆիկական GDSII ֆայլի ծրագրավորում ծրագրավորող բջիջներով (նկ. 5), որի արդյունքում ստացվում են ԾՕ-ի քանակությամբ ծրագրավորված GDSII ֆայլեր:
00000000	01111111	
00000000	00111111	
00000000	00011111	
00000000	00001111	
00000000	00000111	
00000000	00000011	
00000000	00000001	

ա. գրայական բ. անկյունագծային

Նկ. 4. Ծրագրային օրինակները 8x8 հիշողության նմուշի համար


3. Օգտվելով GDSII ֆայլից՝ SPICE ձևաչափի ֆայլեր ստանալու կանոններով 463 (LVS rule deck) ԾՀ-ն դուրս է բերում համապատասխան SPICE ֆայլերը և կատարում այդ ֆայլերի մոդելավորումը: Մոդելավորման ընթացքում ԾՄ կատարում է հիշողության նմուշից «կարդալ» գործողությունը, որի արդյունքում ստացված և համապատասխան ձևով մշակված տեքստային ձևաչափով ֆայլերը

պարունակում են նմուշի մոդելը ստանալու համար անհրաժեշտ կառուցվածքային տարրերի, տիպերի մասին տեղեկություն:



Նկ. 5. Հիշողության ծրագրավորող բջիջների էլեկտրական սխեման

Հիշողության նմուշի 0 և 1 վիճակը ծրագրավորող բջիջների էլեկտրական սխեման ներկայացված է նկ. 5-ում: Հիշողության բջիջն ունի սիմետրիկ կառուցվածք, և հարկադրաբար 0 և 1 վիճակ ստանալու համար բավական է խախտել սիմետրիկությունը՝ ավելացնելով կարճ հոդակցում սխեմայի աջ կամ ձախ մասերում: Նկ. 6-ում ներկայացված է հիշողության բջիջների ծրագրավորումն ապահովող սխեմայի տուպոլոգիան: Ծրագրային հոսքը տեղադրում է ծրագրավորող բջիջները հիշողության բջիջների վրա՝ փոխելով բջիջների արժեքները, ապահովելով հիշողության ծրագրավորումը ըստ ԾՕ-ի ֆայլերի:



Նկ. 6. Հիշողության ծրագրավորման բջջերի տապալուզիան

Փորձնական արդյունքներ: Կառուցվածքային մոդելը ավտոմատ կերպով դուրս բերող ծրագրային հոսքը հաջողությամբ օգտագործվել է տարբեր տեխնոլոգիաների (45 նս, 28 նս) հիշողությունների կառուցվածքային մոդելները ստանալու նպատակով: ԾՀ-ի աշխատանքի միջին տևողությունը կես ժամ է, և կարող է տևել մինչև մի քանի ժամ: ԾՀ-ի հիմնական ժամանակի մեջ մտնում են SPICE ֆայլերի ստացումը և դրանց մոդելավորումը: SPICE ֆայլերի մոդելավորման ժամանակը ուղղակիորեն կախված է (ուղիղ համեմատական է) հիշողության նմուշի մեծությունից՝ բջջերի քանակից: Բացի այդ, միջավայրի աշխատանքի ժամանակը կախված է նմուշի երկրաչափական տեսքից՝ ԾՕ-ի քանակից: Աղյուսակում բերվում են փորձնական արդյունքներ տարբեր տեխնոլոգիաների և կոնֆիգուրացիաների հիշողության նմուշների համար:

Աղյուսակ

NW	NB	CM	PR	PC	NPP	ST	TT
2048	24	4	512	96	4	30	120
2048	32	8	256	256	2	30	60
1536	24	16	96	384	4	30	120
2048	192	4	512	768	3	30	90
1536	16	8	192	128	3	30	90
192	256	4	48	1024	5	30	150
2048	12	4	512	48	5	30	150

NW (Number of Words) – բառերի քանակը հիշողությունում,
 NB (Number of Bits) – հիշողության Մուտքերի/Ելքերի քանակը,
 CM (Column Mux) – սյուների փոխանցատիչ,
 PR, PR=NW/CM - ֆիզիկական տողերի քանակը հիշողությունում,

PC, $PC = NB \times CM$ - ֆիզիկական սյուների քանակը հիշողությունում,
 NPP (Number of Programing Patterns) - ծրագրավորման օրինակների քանակը,
 ST (Simulation Time in minutes) - նմուշի SPICE ֆայլի մոդելավորման ժամանակը,
 TT (Total Time in minutes) $TT = NPP \times ST$ - ընդհանուր ժամանակը:

Փորձերի ընթացքում նկատվեց, որ մոդելի դուրսբերման ժամանակը կախված
 չէ հիշողության պատրաստման տեխնոլոգիայից, և ՄՀ-ի աշխատանքի տևողությունը
 հիմնականում կախված է նմուշի կոնֆիգուրացիայի պարամետրներից (NW, NB,
 CM) և կատարվող մոդելավորման ժամանակից:

Իհարկե, ՄՀ-ում աշխատանքի ընդհանուր ժամանակը գնահատելիս անհրաժեշտ
 է նախապես հաշվի առնել նախապատրաստական աշխատանքների վրա ծախսված
 ժամանակը, որը կարող է տևել 4-ից 8 ժամ: Ավտոմատ կերպով դուրսբերման միջա-
 վայրում ստացված կառուցվածքային մոդելը վավերացված է և պատրաստ է անմի-
 ջական օգտագործման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Advanced Test Methods for SRAMs. Effective Solution for Dynamic Fault Detection in Nanoscaled Technologies / **A. Bosio, L. Dilillo, P. Girard, et al.**-Springer. 2010. -171 p.
2. **Amirkhanyan K.** Defect injection and a memory test algorithms verification flow // CSIT. - 2011 -P. 283-286.
3. Application of defect injection flow for fault validation in memories / **K. Amirkhanyan, A. Davtyan, G. Harutyunyan, et al** // EWDTS. – 2012.- P. 19-22.
4. US Patent 7786840 Memory Modeling Using an Intermediate Lave Structural Description/ **Y. Zorian, V. Vardanian, K. Aleksanyan, K. Amirkhanyan.** - August 3, 2010.
5. US patent 8112730 Various methods and apparatuses for memory modeling using a struc- tural primitive verification for memory compilers/ **K. Amirkhanyan, K. Aleksanyan, S. Karapetyan, A. Shubat, S. Shoukourian, V. Vardanian, Y. Zorian.** - Feb.7, 2012.
6. US 8850277 B2 DETECTING RANDOM TELEGRAPH NOISE INDUCED FAILURES IN AN ELECTRONIC MEMORY/ **K. Amirkhanyan, A. Davtyan, G. Harutyunyan, T. Melkumyan, S. Shoukourian, V. Vardanian, A. Shubat, Y. Zorian.** - Sep. 30, 2014.
7. Generation of Memory Structural Model Based on Memory Layout / **K. Amirkhanyan, K. Darbinyan, A. Davtyan, G. Harutyunyan, S. Shoukourian, V. Vardanian, Y. Zorian;** US Patent application number: 20130346056 Publication date: 2013-12-26 (<http://www.faqs.org/patents/app/20130346056>)

Մինոփսիս Արմենիա ՓԲԸ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.05.2014:

К.С. АМИРХАНИЯН

**АВТОМАТИЧЕСКОЕ ИЗВЛЕЧЕНИЕ СТРУКТУРНОЙ МОДЕЛИ ОБРАЗЦА
ПАМЯТИ ИЗ ГРАФИЧЕСКОГО ФОРМАТА GDSII**

Представлена программная среда, которая позволяет в автоматическом режиме извлекать структурную модель образца статической памяти из используемого в производстве файла графического формата **GDSII**. Приведены функциональная и структурная блок-схемы программной среды. Рассмотрены проблемы, сложности и ограничения, связанные с извлечением структурной модели, а также некоторые результаты экспериментов.

Ключевые слова: структурная модель, образец памяти, **GDSII** формат образца, программная среда, статическая память произвольной выборки (СППВ), структурные типы.

K.S. AMIRKHANYAN

**AUTOMATIC STRUCTURAL MODEL EXTRACTION FROM THE MEMORY
INSTANCE GRAPHICAL FORMAT GDSII**

A program flow is presented which allows to automatically extract the structural model of SRAM instance from the graphical file GDSII. The functional and structural block diagrams are presented. Problems, difficulties and limitations connected with the extraction of the structural model as well as some results of experiments are considered.

Keywords: structural model, SRAM, memory instance, instance GDSII format, program flow.

Լ.Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ

Առաջարկվում է պատահական թեստավորման հարմարվողական մեթոդ, որը նախատեսված է ոչ կետային տեսակի ձախողման պատկերներ ունեցող մուտքային տիրույթներով ծրագրային միջոցների համար: Փորձարկման ժամանակ մուտքային տարածության մեջ թեստ-դեպքերի համաչափ բաշխման շնորհիվ առաջին սխալի բացահայտման հավանականությունը մեծանում է ավելի քիչ թեստ-դեպքերի օգտագործումով, քանի որ սովորական պատահական փորձարկման համար օգտագործվում են ավելի շատ թեստ-դեպքեր:

Առանցքային բառեր. պատահական թեստավորում, թեստ-դեպքերի գեներացում, հավասարաչափ բաշխում, մուտքային տվյալների ձախողումների պատկեր:

Ներածություն: Պատահական թեստավորման (ՊԹ) ավտոմատացումը հիմնվում է մուտքային տիրույթում պատահականության որևէ սկզբունքով թեստ-դեպքերի հաջորդական ընտրության՝ գեներացման վրա [1]: Հավասարաչափ կամ բաշխման այլ օրենքի կիրառմամբ թեստ-դեպքերի գեներացումը սովորաբար համարվում է ոչ միայն պարզ, այլ նաև դիմելու ինտուիտիվ ձև [1]: Մուտքագրման տիրույթի տարբերը հայտնի են որպես ձախողում պատճառող տվյալներ, եթե դրանք ստեղծում են սխալ արդյունքներ:

ՊԹ-ի արդյունավետությունը [2], վիճակագրական գնահատականների արտածման ունակությունն ու հուսալիությունը կարող են զգալիորեն բարելավվել՝ թեստային դրվագների արդյունավետ բաշխում կիրառելու և քիչ փորձարկմամբ առաջին ձախողումը բացահայտելու պարագայում: Թեստային դրվագների բաշխման տարբեր մոտեցումներ են առաջադրում հարմարվողական պատահական թեստավորման (ՀՊԹ) մեթոդները: Առկա են հարմարվողական պատահական թեստավորման շատ խնդիրներ [3], որոնք վերաբերում են, օրինակ, տարբեր չափանիշներով հավասարաչափ տարածմանը, թեկնածու թեստ-դեպքերի հավաքածուներ կազմելու ուղիներին: [3]-ում ապացուցվում է, որ թեստավորման ռազմավարության արդյունավետությունը կախված է ոչ միայն ձախողման չափից, այլև դա առաջացնող տվյալների երկրաչափական պատկերից: Սա նշանակում է, որ պատահական թեստավորման իրականացումը կարող է բարելավվել, եթե հաշվի առնվի ձախողում պատճառող մուտքային տվյալների երկրաչափական պատկերը:

Ըստ [4]-ի պատահական փորձարկումների՝ երկու ամենատարածված արդյունավետ չափումներն են առնվազն մեկ ձախողում հայտնաբերելու հավանականությունը (P-չափման միջոց) և հայտնաբերված ձախողումների ակնկալվող շարքը (E-չափ-


ման միջոց): Սակայն այդ միջոցները կատարյալ չեն, կան որոշ քննադատություններ դրանց վերաբերյալ՝ չնայած իրենց հանրաճանաչությանը: Այսինքն՝ երբեմն չկա E-չափման միջոցի կիրառության անհրաժեշտություն՝ ենթադրելով որոշ սխալներ, իսկ P-չափման միջոցը չի տարբերակում դեպքերը՝ ըստ խափանումների բացահայտման քանակի:

Ստորև P-չափման միջոցի ու E-չափման միջոցի փոխարեն առաջարկվում է արդյունավետության չափման մեկ այլ մեխանիզմ՝ առաջին ձախողումը բացահայտող դեպքերի անհրաժեշտ (ակնկալվող) քանակը՝ F-չափման միջոցը:


Եթե մուտքային D դոմենի չափը նշանակենք d-ով, իսկ m-ով և n-ով՝ համապատասխանաբար ձախողում պատճառող տվյալները և թեստերի ընդհանուր քանակը, ապա փորձարկման և խափանումների հաճախությունները կչափվեն համապատասխանաբար $\sigma = n/d$ և $\theta = m/d$ բանաձևերով:

Դեպքերի փոխարինմամբ պատահական փորձարկման դեպքում F-չափման միջոցը կորոշվի որպես $F=1/\theta$, կամ, որ համարժեք է, $F=d/m$: Այսինքն՝ F-չափման միջոցն արտացոլում է թեստավորման ռազմավարության արդյունավետությունը ավելի ուղղակիորեն և բնականորեն, քանի որ ստորին F-չափումը նշանակում է, որ ավելի քիչ թեստ-դեպքեր են պահանջվում առաջին ձախողումը բացահայտելու համար: Գործնականում, երբ ձախողում է հայտնաբերվում, փորձարկումը սովորաբար կանգ է առնում, և սկսվում է կարգաբերումը: Թեստավորման փուլը սովորաբար վերսկսվում է միայն այն բանից հետո, երբ ամրագրվում է ձախողում: Հետևաբար, F-չափման միջոցը ոչ միայն ավելի ինտուիտիվ ձև է, այլև ավելի իրատեսական է գործնական տեսանկյունից:


[3]-ում նշվում է, որ փորձարկման որոշ ռազմավարություններ բխում են ձախողում պատճառող մուտքային տվյալների երկրաչափական պատկերներից: Վերջինները դասակարգվում են ըստ երեք կատեգորիաների՝ կետային, շերտային և տեղամասային: Պարզության համար դիտարկվում են երկչափ մուտքային տիրույթների պատկերներ: Նկ.1-3-ում ցուցադրված են այդ պատկերները համապատասխանաբար կետային, շերտային և տեղամասային մոդելներով: Արտաքին սահմանները ներկայացնում են մուտքագրման տիրույթը, իսկ լրացված շրջանները մատնանշում են ձախողում պատճառող տվյալները՝ պատկերների կամ նախշերի տեսքով:



Նկ. 1. Կետային մոդել



Նկ. 2. Շերտային մոդել



Նկ. 3. Տեղամասային մոդել

Կետային օրինակում ձախողում պատճառող տվյալները միայնակ կետեր են, որոնք ձևավորում են շատ փոքր չափի շրջաններ՝ սփռված ամբողջ տիրույթով: Շերտի օրինակում ձախողում պատճառող տվյալները ձևավորում են նեղ շերտ [5], իսկ տեղամասային օրինակի հիմնական հատկանիշը ձախողում պատճառող տվյալների կենտրոնացումն է մեկ կամ մի քանի տարածաշրջաններում:

Դիտարկենք «կանոնավոր» երկրաչափություն ունեցող մուտքագրման մի D տիրույթ, որում հեշտ է գեներացնել ձախողում պատճառող տվյալներ՝ պատահական ձևով: Մասնավորապես, ենթադրենք D տիրույթը քառակուսի է, որի չափերն են՝ x -ը և y -ը, ընդ որում՝ $\{(x, y) \mid 0 \leq x, y \leq 10\}$: Ենթադրենք՝ սխալը ծրագրի $x+y>3$ պայմանական արտահայտության մեջ է, իսկ ճիշտ արտահայտությունը պետք է լինի $x+y > 4$:

Այդ դեպքում ցանկացած ձախողում պատկանում է $\{(x, y) \mid 3 < x + y \leq 4\}$ տեղամասին, որը D քառակուսային տիրույթում մեկ միավոր լայնությամբ շերտ է:

Պատահական փորձարկման կիրառումն այդ ծրագրում ենթադրում է այնպիսի կետերի գեներացում, որ թեստերի հաջորդականությունը լինի հնարավորինս ձգված, այսինքն՝ ընտրված հաջորդ թեստը գտնվի նախորդից առնվազն մեկ միավոր հեռավորության վրա:

Այսպիսով, առաջարկվում է պատահական փորձարկման ժամանակ նոր թեստի գեներացման դեպքում համոզվել, որ այն շատ մոտ չէ որևէ նախորդ թեստի: Նվազագույն F -ի հասնելու ճանապարհն է նախ՝ մի շարք պատահական թեստ-դեպքերի գեներացումը, ապա՝ դրանցից "լավագույն" մեկի ընտրությունը, որն ապահովում է դրանց հնարավորինս համաչափ տարածումը (սփռումը) ամբողջ մուտքային դաշտում:

Խնդրի դրվածքը և ալգորիթմի հիմնավորումը: Տրված են երկու՝ *գործարկված* $T = \{T_1, T_2, \dots, T_N\}$ և *թեկնածու* $C = \{C_1, C_2, \dots, C_K\}$ թեստ-դեպքերի հավաքածուներ, որոնք չեն հատվում $C \cap T = \emptyset$:

Գործարկված թեստ-դեպքը սահմանված է որպես ոչ մի ձախողում չբացահայտող արդեն կատարված թեստ, իսկ թեկնածուն սահմանված է որպես մուտքային տիրույթից պատահականորեն ընտրված որևէ թեստ:

Պահանջվում է գործարկված թեստ-դեպքերի հավաքածուն աստիճանաբար համալրել թեկնածու հավաքածուից ընտրված տարրով՝ մինչև ձախողման ի հայտ գալը: Թեկնածու հավաքածուի տարրը, որն ամենահեռուն է բոլոր կատարված թեստ-դեպքերից, ընտրվում է որպես հաջորդ թեստ-դեպք:

Հայտնի են հարմարվողական պատահական թեստավորման համար թեկնածու թեստ-դեպքերի հավաքածու գեներացնող և «ամենահեռուի» գաղափարն իրականացնող տարբեր ալգորիթմներ:

Առաջարկվող մեթոդը (թեկնածու թեստերի ընտրություն Հիլբերտի կորի կառուցմամբ՝ HT) հիմնավորելու համար այն համեմատության մեջ է դրված հարմարվողական պատահական թեստավորման (թեկնածու թեստերի ֆիքսված չափով՝

FSCST) ալգորիթի [4] և սովորական պատահական թեստավորման ալգորիթի (RT) հետ:

FSCST մեթոդի էությունը թեստ-դեպքերի հավասարաչափ տարածումն է գործարկված և մնացած թեստերի միջև հեռավորությունների մինիմումների մաքսիմումի չափանիշով:

Թեկնածու թեստերի բազմությունն ունի հաստատուն չափ (k), և յուրաքանչյուր անգամ, երբ ընտրվում է որևէ թեստ, ստեղծվում է թեկնածուների նոր հավաքածու: FSCST ալգորիթը նկարագրում է, թե ինչպես է գեներացվում հարմարվողական պատահական փորձարկման այս տարբերակում թեկնածու թեստերի շարքը և ընտրվում փորձարկման թեստ-դեպքը:

Թեկնածու թեստերի C հավաքածուից ընտրվում է c_h տարրն այնպես, որ բոլոր $j \in \{1, 2, \dots, k\}$ -ի համար տեղի ունենա հետևյալ պայմանը՝

$$\min_{i=1}^n \text{dist}(c_h, t_i) \geq \min_{i=1}^n \text{dist}(c_j, t_i),$$

որտեղ dist -ը սահմանվում է որպես էվկլիդեսյան հեռավորություն, այսինքն՝ m -չափանի մուտքային տիրույթում երկու՝ $a=(a_1, a_2, \dots, a_m)$ և $b=(b_1, b_2, \dots, b_m)$ կետերի միջև հեռավորությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{dist}(a, b) = \sqrt{\sum_{i=1}^m (a_i - b_i)^2} :$$

Կատարված է նախնական ուսումնասիրություն՝ տեսնելու համար, թե ինչպես է թեկնածու հավաքածուի չափն ազդում հարմարվողական պատահական փորձարկման արդյունավետության վրա: Ընդհանուր առմամբ, որքան մեծ է k -ն՝ թեկնածու հավաքածուի չափը, այնքան փոքր թվով թեստ-դեպքեր են անհրաժեշտ առաջին ձախողումը բացահայտելու համար: Բացի այդ, $k \geq 10$ -ի դեպքում չկա առաջին ձախողումը բացահայտելու համար անհրաժեշտ թեստ-դեպքերի քանակի մեծ տարբերություն: Հետևաբար, հաստատված է $k = 10$ թիվը:

FSCS-ն ունի զգալիորեն ավելի փոքր F -չափ (ձախողում հայտնաբերելու համար կատարված թեստերի քանակ), քան RT-ն: Փորձնական արդյունքները ցույց են տալիս, որ FSCS-ն ունի RT-ին գերազանցելու լավ հնարավորություն (շատ զգալի չափով՝ ավելի քան 50%-ով): Մյուս կողմից, հաջորդ թեստ-դեպքն ընտրելիս FSCS-ին անհրաժեշտ են ավելի շատ ռեսուրսներ, քան պահանջում է RT-ն: Թող N -ը լինի առաջին ձախողում հայտնաբերելու համար կատարված թեստերի քանակը, իսկ K –ն՝ FSCS թեկնածու հավաքածուի չափը: Ընտրության բարդությունը KN^2 կարգի է:

Ալգորիթի FSCST

/*selected set := { test data already selected };

candidate set := {};

```


total number of candidates := M*M; */
function Select The Best Test Data(selected set, candidate set,
    total number of candidates);
    best distance := -1.0;
    for i := 1 to total number of candidates do
        candidate := randomly generate one test data from the program
            input domain, the test data cannot be in
            candidate set nor in selected set;
        candidate set := candidate set + { candidate };
        min candidate distance := Max Integer;
        foreach j in selected set do
            min candidate distance := Minimum(min candidate distance,
                Euclidean Distance(j, candidate));
        end foreach
        if (best distance < min candidate distance) then
            best data := candidate;
            best distance := min candidate distance;
        end if
    end for
    return best data;
end function

```

HT-մեթոդի էությունը թեկնածու թեստերի հավաքածուի ձևավորումն է Հիլբերտի կորի դիսկրետ մոտարկման կառուցմամբ և այդ հավաքածուից հերթական «հեռու» թեստի ընտրությունը:

Մաթանալիզի տեսության համաձայն՝ երկչափ միավոր քառակուսու (կամ ավելի ընդհանրական՝ N-չափանի հիպերխորանարդի) մեջ սահմանափակված տարածությունը կարելի է համաչափ լցնել շարունակական կորով: Երկչափ կամ եռաչափ (կամ ավելի բարձրչափանի) շարունակական կորը ինտուիտիվ կարող է դիտվել որպես անընդհատ շարժվող կետ: Սակայն այն սահմանվում է նաև որպես անսահմանափակ իրական առանցքի անընդհատ կոր կամ միավոր (0, 1) բաց միջակայքի կոր: Առավել լավ ուսումնասիրված են երկչափ կամ եռաչափ էվկլիդեսյան տարածությունը շարունակական կորով լցնելու դեպքերը (ալգորիթմները): Տարածությունը համաչափ լցնող անընդհատ ֆրակտալը՝ Հիլբերտի կորը, հայտնաբերել է գերմանացի մաթեմատիկոս Դավիթ Հիլբերտը 1891թ., որպես Գաուս-Պիանոյի հայտնաբերած տիեզերական տարածությունները լցնող կորերի մի տարբերակ:

Հիլբերտի կորի դիսկրետ մոտարկումները շատ օգտակար են երկչափ և եռաչափ տարածությունները «հսկելու» համար (նկ. 4) և կարող են կիրառվել նաև պատահական թեստավորման դեպքում:




Նկ. 4. Հիլբերտի կորի երեք մակարդակները

Այս մեթոդով տարածությունը դիսկրետացվում է՝ յուրաքանչյուր չափը բաժանելով 2-ի աստիճան հանդիսացող m թվով բջիջների (բջիջ չափը կախված է ձախողման տիրույթի ենթադրյալ չափերից), և սկսվում է կորի կառուցումը $[m \times m]$ չափերով տիրույթի $P(0,0)$ բջիջ մինչև $P(m,m)$ բջիջը:

Կառուցելով մուտքային տիրույթում n -րդ աստիճանի կոր ($n = \log_2 m$), կարելի է այն դիտարկել որպես թեկնածու թեստերի վրայով անցնող ճանապարհ, որի կետերի քանակը 4^n է: Այսինքն՝ H_n կորի n -րդ դիսկրետ մոտարկման էվկլիդեսյան երկարությունը, կորի մակարդակից կախված, աճում է էքսպոնենցիալ օրենքով, միաժամանակ մնալով սահմանափակված վերջավոր տիրույթում:

Եթե $P(x, y)$ -ը որոշում է որևէ թեստ, իսկ այդ թեստի դիրքը կորի վրա d -ն է, ապա d -ին մոտ հեռավորության վրա կգտնվի $P(x, y)$ -ին մոտիկ որևէ այլ թեստ: Հակառակ պնդումը, սակայն, միշտ չէ ճշմարիտ: Նկ. 4-ում պարզ երևում է, որ կետերի բազմաթիվ զույգեր գտնվում են մեկ միավոր էվկլիդեսյան հեռավորության վրա, բայց կորի վրա գտնվում են միմյանցից շատ ավելի հեռու:

Պատահական հարմարվողական թեստավորման այս մեթոդում թեստի ընտրությունը (մինչև առաջին ձախողումը) կատարվում է Հիլբերտի կորի երկարությամբ (նկ. 5)՝ պահպանելով տեղաշարժի որոշակի հեռավորություն: n աստիճանի կորի դեպքում n իտերացիաներից հերթական i -րդը տեղի է ունենում i -րդ կետից $d=4^{n-i}$ քայլով, որպեսզի բացառվի «մոտակա-հեռու» թեստի փորձարկումը:



Նկ. 5. Հիլբերտի կորով փորձարկումների իտերացիաների քայլերը n և $n+1$ մակարդակներում

Այս ալգորիթմով փորձարկումներն իրականացնելիս վատագույն դեպքում կունենանք F - գնահատականի 4^n առավելագույն քանակ:

Ըստ այս մեթոդի՝ կիրառված են Հիլբերտի կորի կառուցման ռեկուրսիվ և կորի երկարությամբ իտերացիոն որոնումներ իրականացնող ալգորիթմները:

Հիլբերտի կորի կառուցման ընթացակարգը

/*Algorithm Hilbert-curve */

```

procedure hilbert(x, y, xi, xj, yi, yj, n) /*n-current level */
  if (n <= 0) then   LineTo(x + (xi + yi)/2, y + (xj + yj)/2);
  else
  {
    hilbert(x,      y,      yi/2, yj/2, xi/2, xj/2, n-1);
    hilbert(x+xi/2,  y+xj/2,  xi/2, xj/2, yi/2, yj/2, n-1);
    hilbert(x+xi/2+yi/2, y+xj/2+yj/2, xi/2, xj/2, yi/2, yj/2, n-1);
    hilbert(x+xi/2+yi,  y+xj/2+yj,  -yi/2, -yj/2, -xi/2, -xj/2, n-1); }
  end procedure

```

Իտերացիոն որոնումների ֆունկցիան

/*Algorithm recursiv search */

candidate set := {Hilbert curve};

total number of candidates := $M \cdot M$;

Nf=0;

function Select The Best Test Data(candidate set, total number of candidates);

level := n ;

for i := 1 **to** n **do**

for j := i **to** total number of candidates **step** 4^{n-i}
do


```

Nf++;
candidate := candidate set[j];
if (candidate is best test) then
    break; break;
end if
end for
return Nf;
end function

```

Վերլուծական ուսումնասիրության (մեթոդների համեմատության) իրականացման համար պատահականորեն ընտրված են մի քանի մուտքային դոմեններ՝ ձախողման տիրույթների տարբեր դիրքերով և չափերով: Յուրաքանչյուր մուտքային դոմենի համար ստացվել են (N_h , N_f , N_r) թվերը, որոնք համապատասխանում են HT, FSCST և RT ալգորիթներով փորձարկման դեպքերում առաջին ձախողումը բացահայտելու համար անհրաժեշտ փորձարկումների քանակներին: Արդյունքները, որոնք բերված են աղյուսակում և նկ.6-ում, ցույց են տալիս, որ միջին հաշվով $N_h < N_f < N_r$, այսինքն՝ առաջին ձախողումը բացահայտելու համար HT-ի համար պահանջվում են միջին հաշվով ավելի քիչ թեսթի-դեպքեր, քան FSCST-ի, առավել ևս՝ RT-ի դեպքում: Արտադրողականության բարելավման հաշվարկը կատարված է հետևյալ բանաձևերով՝

$$\frac{N_r - N_h}{N_r} \times 100, \quad \frac{N_f - N_h}{N_f} \times 100 :$$



Նկ. 6. Փորձական արդյունքների համեմատության դիագրամը

N₅, N_r, H_h արժեքների համեմատական ամփոփում

N	Ձախողման տիրույթի սկզբնական կոորդինատները		Ձախողման տիրույթի չափերը		N _h	N _f	N _r	N _h -ի բարելավման %-ը	N _r -ի համեմատ
	X	Y	W	H					
1	655	427	91	85	18	243	34	93%	47%
2	149	774	125	175	11	29	3	62%	-267%
3	748	14	118	153	20	79	112	75%	82%
4	634	282	80	174	76	134	100	43%	24%
5	72	141	63	51	92	163	259	44%	64%
6	709	24	122	103	20	12	27	-67%	26%
7	391	866	156	167	47	45	17	-4%	-176%
8	327	174	142	169	27	13	20	-108%	-35%
9	326	817	155	142	47	13	25	-262%	-88%
10	518	676	138	148	14	163	23	91%	39%
11	615	2	166	141	80	57	124	-40%	35%
12	271	796	125	148	11	63	87	83%	87%
13	666	874	176	78	59	107	44	45%	-34%
14	665	610	61	51	219	208	759	-5%	71%
15	436	230	57	171	111	157	97	29%	-14%
16	65	742	163	156	44	60	67	27%	34%
17	856	104	126	171	83	144	123	42%	33%
18	588	629	69	68	226	433	218	48%	-4%
19	127	546	167	163	38	75	39	49%	3%
20	293	244	87	85	7	67	323	90%	98%
21	101	132	174	92	23	95	175	76%	87%
22	802	444	130	114	271	419	119	35%	-128%
23	165	419	130	102	8	26	40	69%	80%
24	522	118	103	119	78	137	181	43%	57%
25	202	687	92	117	158	674	179	77%	12%
26	815	784	62	137	61	187	214	67%	71%
27	674	882	160	158	59	63	102	6%	42%
28	266	219	176	127	7	106	77	93%	91%
29	878	848	171	95	64	69	74	7%	14%
30	316	565	83	139	51	147	331	65%	85%

Եզրակացություն. Պատահական փորձարկումը հայեցակարգով պարզ է և հեշտ է իրականացնել: Բացի այդ, կարելի է անել հուսալիության և վիճակագրական հաշվարկներ: Հետևաբար, այն օգտագործվում է բազմաթիվ թեստավորողների կողմից: Քանի որ պատահական փորձարկման դեպքում չի օգտագործվում որևէ տեղեկություն գեներացված թեստ-դեպքերի մասին, այն չի կարող լինել թեստավորման հզոր մեթոդ, և դրա կատարումը կախված է միայն ձախողման ինտենսիվության չափերից:

Ոչ կետային ձախողման մոդելների համար պատահական հարմարվողական փորձարկումները՝ Հիլբերտի կորի երկարությամբ թեստ-դեպքերի համաչափ տա-

բաժմամբ, խափանումների արագ հայտնաբերման և դրանց օրինաչափությունը գտնելու լավ հնարավորություններ են տալիս:

Այս գաղափարի օգտակարությունը հիմնավորվել է բազմաթիվ փորձարկումների միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **White, L.J.** Software testing and verification // Advances in Computers. - 1987. - 26. - P. 335–391.
2. **Hamlet, R.** Random testing. Encyclopedia of Software Engineering / Edited by Marciniak.- J. Wiley, 1994.
3. **Chan, F.T., Chen, T.Y., Mak, I.K., Yu, Y.T.** Proportional sampling strategy: guidelines for software testing practitioners // Information and Software Technology. - 1996. - 38. - P. 775–782.
4. **Chen, T.Y., Yu, Y.T.** On the relationship between partition and random testing // IEEE Transactions on Software Engineering. - 1994. - 20. – P. 977–980.
5. **Chen, T.Y., Eddy, G., Merkel, R., Wong, P.K.** Adaptive random testing through dynamic partitioning // Proceedings of the 4th International Conference on Quality Software (QSIC 04), IEEE Computer Society Press. - 2004.

Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա: Նյութը ներկայացվել է խմբագրություն 09.04.2014:

Л.Г. КАРАПЕТАН

АЛГОРИТМ АДАПТИВНОГО СЛУЧАЙНОГО ТЕСТИРОВАНИЯ

Предлагается метод адаптивного случайного тестирования, который предназначен для тестирования программных средств с неточечным изображением отказов входной области. За счет равномерного распределения тестовых кейсов при тестировании во входном пространстве вероятность обнаружения первой ошибки увеличивается с меньшим использованием тестовых кейсов, так как для обычного случайного тестирования используется намного больше тестовых кейсов.

Ключевые слова: случайное тестирование, генерация тестовых кейсов, равномерное распределение, изображение неудачных входных данных.

L.G. KARAPETYAN

AN ALGORITHM FOR ADAPTIVE RANDOM TESTING

A method for adaptive random testing is proposed for testing softwares with non-point types of patterns of failure-causing inputs. At the expense of an even spread of test cases in the input space, the probability of finding the first error increases with little application of test cases, as for ordinary random testing, many more test cases are used.

Keywords: random testing, developing test cases, even distribution, failure input patterns.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՈԴՈՍԹԱՆ Ա.Կ., ԿԱՐԱՊԵՏՑԱՆ Ա.Ն., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կ.Վ.

ՀԱԿԱՇՓԱԿԱՆ ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՇՓԱՔԻՄԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ..... 365

ԾՈՒՂՈՒՆՅԱՆ Հ.Վ., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լ.Ս.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈԼԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 371

ՇԱՂԱՍՏԱՆ Ա.Ս., ԲԵԳՈՅԱՆ Լ.Վ.

ԹՎԱՅԻՆ ՋԵՐՄԱԶԱԺ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐՈԼԱԿԱՆ ԿԵՐԱՓՈՒԽԻՉՈՎ..... 378

ԱՏՐԱ ՍՈՒՍԱՏԱՅՈՒՆԵՐ

ԷՆԵՐԳԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈԴԱԼԱՎՈՐՈՒՄԸ՝ ՀԱՇՎԻ ԱՌԱՇ ԲԵՌԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 384

ԱՂԱՋԱՆՅԱՆ Ա.Ա., ՀԱԽՈՒՍՅԱՆ Ա.Ա., ԶԱՔԱՐՅԱՆ Տ.Վ., ՄԵԼԻՔՅԱՆ Հ.Կ., ՊՈԴՈՍԹԱՆ Ն.Գ.

ՓՈՓՈԽԱԿԱՆ ՄԱԳՆԻՏԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԵՐԿԶԱՓ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՄԱՆ ԵՎ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 395

ՄԻՍՈՆՅԱՆ Ռ. Հ., ԵԶԱԿՅԱՆ Ն. Դ., ՂՈՒՅԱՆ Ա. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ԶԱՓԻՉ ՄԱՐՔ 403

ՓԻԼԱՎՋՅԱՆ Գ.Ա.

ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻՆ՝ ՈՍՊՆՅԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍԱՊԵՍ ՇԱՀԱՎԵՏ ՖՈՏՈԷԼԵԿՏՐՈԼԱԿԱՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՏՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ..... 409

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ.Խ.

ԱՆԱՐՁԱԳԱՆՔ ՄԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԾՈՒՄԸ ՀՊՃՀ ԱՆՏԵՆԱՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ԱՆՏԵՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԶՓՄԱՆ ՀԱՄԱՐ..... 417

ՄԻՍՈՆՅԱՆ Ս.Հ., ԱԴԱՍՅԱՆ Գ.Վ., ՄԻՍՈՆՅԱՆ Ա.Ս., ՊՈԱՋՅԱՆ Լ.Վ.

ԿՈՄՊԼԵՔՍ ՄԻԱՊԱՐԱՄԵՏՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՅՎԱԾ ՀԱԿԱԴԱՐՁ ՄԱՏՐԻՑՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԴԵԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՄԵԹՈԴՆԵՐ (II)..... 425

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Տ.Ն., ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն.Հ., ԽԱՐԻՍՈՎ Ե.Ռ., ԳԱՍՊԱՐՅԱՆ Օ.Ն., ՀՈՎԱԿԻՍՅԱՆ Ն.Գ.

ԲԱԶՄԱԶԱԺ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ L1 ՀԱՐՄԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 434

ՆԱԼՉԱՋՅԱՆ Թ.Ա., ԲԱՂՐԱՍՅԱՆ Գ.Ս.

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՎՏՈՄԱՏԱՅՈՒՄԸ..... 446

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ.Ս.

ԴԵԼՈՆԵԻ ԵՌԱՆԿՈՒՆԱՊԱՏՄԱՆ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ..... 452

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Կ.Ս.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ԱՎՏՈՄԱՏ ԴՈՒՐՄԲԵՐՈՒՄԸ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ GDSII ՋԵՎԱԶԱՓԻ ՖԱՅԼԻՑ..... 458

ԿԱՐԱՊԵՏՑԱՆ Լ. Գ.

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ..... 467

СОДЕРЖАНИЕ

ПОГОСЯН А.К., КАРАПЕТЯН А.Н., ОГАНЕСЯН К.В. ИССЛЕДОВАНИЕ ТРИБОХИМИЧЕСКИХ ПРОЦЕССОВ АНТИФРИКЦИОННЫХ ПОЛИМЕРНЫХ МАТЕРИАЛОВ	365
ЦУГУНЯН Г.В., ОГАННИСЯН Л.С. СОСТОЯНИЕ ЭЛЕКТРОЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ И ОСНОВНЫЕ ПУТИ РАЗВИТИЯ В КОНТЕКСТЕ РЕГИОНАЛЬНОГО ИНТЕГРИРОВАНИЯ	371
ШАХКАМЯН А.С., БЕГОЯН Л.К. ЦИФРОВОЙ ТЕРМОМЕТР С ТЕРМОЭЛЕКТРИЧЕСКИМ ПРЕОБРАЗОВАТЕЛЕМ	378
АФРА МУСТАФАЕИ МОДЕЛИРОВАНИЕ СИСТЕМЫ ЭНЕРГОМЕНЕДЖМЕНТА С УЧЕТОМ ХАРАКТЕРИСТИК НАГРУЗКИ И ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ.....	384
АГАДЖАНИЯН А.А., АХУМЯН А.А., ЗАКАРЯН Т.В., МЕЛИКЯН А.К., ПОГОСЯН Н.Г. СИСТЕМА ДВУМЕРНОЙ ВИЗУАЛИЗАЦИИ И МОНИТОРИНГА ПЕРЕМЕННОГО МАГНИТНОГО ПОЛЯ	395
СИМОНЯН Р.Г., ЕЗАКЯН Н.Д., ГУЛЯН А.Г. УСТРОЙСТВО ДЛЯ ИЗМЕРЕНИЯ ПАРАМЕТРОВ ВНЕШНЕГО ДЫХАНИЯ	403
ПИЛАВДЖЯН Г.А. ЛИНЗОВЫЕ ЭКОНОМИЧЕСКИ ЭФФЕКТИВНЫЕ ФОТОЭЛЕКТРИЧЕСКИЕ КОНЦЕНТРАТОРНЫЕ СИСТЕМЫ СОЛНЕЧНОЙ ЭНЕРГИИ.....	409
ХАЧАТРЯН Л.Х. ПРОЕКТИРОВАНИЕ БЕЗЭХОВОЙ КАМЕРЫ ДЛЯ ИЗМЕРЕНИЯ ПАРАМЕТРОВ В ЛАБОРАТОРИИ АНТЕНН ГИУА	417
СИМОНЯН С.О., АДАМЯН Г.В., СИМОНЯН А.С., ПРАЗЯН Л.В. ДЕКОМПОЗИЦИОННЫЕ МЕТОДЫ ОПРЕДЕЛЕНИЯ КОМПЛЕКСНЫХ ОДНОПАРАМЕТРИЧЕСКИХ ОБОБЩЕННЫХ ОБРАТНЫХ МАТРИЦ (II).....	425
ОГАННИСЯН Т.Н., ВАРДАНИЯН Н.А., ХАРИСОВ Е.Р., ГАСПАРЯН О.Н., ОВАКИМЯН Н.Г. О ПРИМЕНЕНИИ L1 АДАПТИВНОГО УПРАВЛЕНИЯ В МНОГОМЕРНЫХ СИСТЕМАХ УПРАВЛЕНИЯ	434
НАЛЧАДЖЯН Т.А., БАГРАМЯН Г.С. МОДЕЛИРОВАНИЕ И АВТОМАТИЗАЦИЯ ОЦЕНКИ И ПРОГНОЗИРОВАНИЯ ПОСТУПЛЕНИЙ В ГОСБЮДЖЕТ	446
СУКИАСЯН Г.С. ЭКСТРЕМАЛЬНОЕ СВОЙСТВО ТРИАНГУЛЯЦИИ ДЕЛОНЕ И ЕГО ПРИМЕНЕНИЕ ПРИ РЕШЕНИИ ПОЛЕВЫХ ЗАДАЧ.....	452
АМИРХАНИЯН К.С. АВТОМАТИЧЕСКОЕ ИЗВЛЕЧЕНИЕ СТРУКТУРНОЙ МОДЕЛИ ОБРАЗЦА ПАМЯТИ ИЗ ГРАФИЧЕСКОГО ФОРМАТА GDSII	458
КАРАПЕТЯН Л. Г. АЛГОРИТМ АДАПТИВНОГО СЛУЧАЙНОГО ТЕСТИРОВАНИЯ.....	467

CONTENTS

POGOSIAN A.K., KARAPETYAN A.N., HOVHANNISYAN K.V. INVESTIGATING THE TRIBOCHEMICAL PROCESSES OF ANTIFRICTION POLYMER MATERIALS.....	365
TSUGHUNYAN H.V., HOVHANNISYAN L.S. THE STATE OF THE ELECTROPOWER SYSTEM OF ARMENIA AND THE BASIC WAYS OF DEVELOPMENT IN THE CONTEXT OF REGIONAL INTEGRATION	371
SHAGHGAMYAN A.S., BEGOYAN L.K. A DIGITAL THERMOMETER WITH A THERMOELECTRIC TRANSDUCER	378
AFRA MOSATAFAEI MODELING THE ENERGY MANAGEMENT SYSTEM TAKING INTO ACCOUNT THE LOAD CHARACTERISTICS AND ECONOMIC PERFORMANCE	384
AGHAJANYAN A.A., HAKHOUMIAN A.A., ZAKARYAN T.V., MELIKYAN H.K., POGHOSYAN N.G. A TWO-DIMENSIONAL VISUALIZATION AND MONITORING SYSTEM FOR AN ALTERNATING MAGNETIC FIELD	395
SIMONYAN R.H., YEZAKYAN N.D., GHULYAN A.G. A DEVICE FOR MEASURING THE PARAMETERS OF EXTERNAL RESPIRATION	403
PILAWJIAN G.A. LENS REFRACTING COST EFFECTIVE PHOTOVOLTAIC SOLAR ENERGY CONCENTRATING SYSTEMS	409
KHACHATRYAN L.KH. DESIGNING AN ANECHOIC CHAMBER FOR PARAMETER MEASUREMENT IN THE ANTENNA LABORATORY OF SEUA	417
SIMONYAN S.H., ADAMYAN G.V., SIMONYAN A.S., PRAZYAN L.V. DECOMPOSITION METHODS FOR DETERMINING COMPLEX ONE-PARAMETRIC GENERALIZED INVERSE MATRICES (II).....	425
HOVHANNISYAN T.N., VARDANYAN N.H., KHARISOV E.R., GASPARYAN O.N., HOVAKIMYAN N.V. ON APPLICATION OF L1 ADAPTIVE CONTROL TO MULTIVARIABLE CONTROL SYSTEMS	434
NALCHAJYAN T.A., BAGHRAMYAN G.S. MODELING AND AUTOMATION OF ESTIMATING AND PREDICTING THE ENTRIES INTO THE STATE BUDGET	446
SUKIASYAN H. S. THE EXTREMAL PROPERTY OF DELAUNAY TRIANGULATION AND ITS APPLICATIONS IN FIELD PROBLEMS.....	452
AMIRKHANYAN K.S. AUTOMATIC STRUCTURAL MODEL EXTRACTION FROM THE MEMORY INSTANCE GRAPHICAL FORMAT GDSII	458
KARAPETYAN L. G. AN ALGORITHM FOR ADAPTIVE RANDOM TESTING	467